




## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



375


4-68

Ա.Ա.Խ.Հ. ԼՈՒՍՅՈՂԿՈՄ.

ԿՈՄՊԼԵՔՍԱՅԻՆ

ԳՐԱԳՐԵՐ

1925 թ.



Ա.Ա.Խ.Հ.

ԳՐԱԳՐԵՐ



MAR 2010

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՑԵՔ!

375+372

4 68

Ա. Ս. Խ. Հ.

այ

ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ԿՈՄԻՏԵՐԻԱՏ

ԱԶԳԱՅԻՆ ՓՈԽՐԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Սոցիալիստական դատարակչության  
գլխավոր վարչություն

370

2725-Ծ

# ԿՈՄՊԼԵՔՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

ՀԱՅԿԱՆ ԵՐԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ

ԲԱԳՈՒ — 1925 թ.

18091  
16081



АССР НКП—Совет Нацменьшинств.

# КОМПЛЕКСНЫЕ ПРОГРАММЫ

Армянских трудовых школ I-й ступени  
(Утвержден Коллегией НКП от 29 июля 1925 г.)

Баку—1925 г.

Издание Главсоцвоса НКП АССР.

## Ա. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄԻ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱ-ՄԱՍՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ

Հոկտեմբերյան հեղափոխությունը մեր դպրոցական կյանքում ևս առաջ բերելով հիմնական հեղաշրջում, առաջադրել է նրա վերակազման խնդիրը, վորն անշուշտ պետք է բոլոր ժամանակի վրա, ընդգրկելով պրոլետարիատի և աշխատավոր գյուղացիության իդեոլոգիայի հստակ ուղիները:

Մարքսի պատմափիլիսոփայական աշխարհայացքը հիմքն է մեր նոր սերնդի դաստիարակության գործին, վորն ասել է թե, նոր դպրոցի պահանջները սերտորեն կապված պետք է լինեն մեր կյանքի և իրականության ռեալ պահանջների հետ:

Հին բուրժուական կարգերին յենթակա դպրոցական միջնորդող, յուր դասակարգային բնավորությամբ միանգամայն բացասում եր նոր դպրոցի վոգուն, ճիշտ այնպես, ինչպես պրոլետարիատի և բուրժուազիայի աշխարհայացքների խոշոր ներհակությունը:

Հին կարգերին յերկրպագու ֆիլիստերները, վորքան ել ճգնելիս լինեյին հաստատելու բուրժուական շրջանի դպրոցների քաղաքական վոգուց գերծ լինելը, դա ակնհայտնի խաբեբայություն եր, և այդ կարգերի ծնունդ դպրոցները չեյին կարող տալ մեզ այն սերունդը, վորը հարազատ արտահայտիչը լիներ աշխատավորության լայն զանգվածների շահերին:

Կրոնի ու պետության ամուր գործակցությունը ամենախոշոր գործոնն եր, վոր բուրժուազիան մատաղ սերնդի միտքը շարունակ պահեր կաշկանդված դրության մեջ, վորովհետև այդ եր պահանջում տիրող դասակարգի իդեոլոգիան:

Թե հին դպրոցը բուրժուազիան ինչպես է ոգտագործել իր դասակարգային շահերի համար, դա պարզորոշ կերպով բացատրում է մեզ Վ. Ի. Լենինը յուր ճառերից մեկում.

«Դպրոցն ամբողջապես դարձել է գործիք բուրժուազիայի դասակարգային տիրապետության համար, լիովին համակվել բուրժուական կասալական վոգով յեվ նպատակ է դրել տալ կապիտալիստներին հյու սպասավորներ»:

Իսկ վորո՞նք են մեր խորհրդային դպրոցի նպատակները:  
Վ. Իլիչն այդ մասին ասում է:



«Ներկայումս միայն մեր պայքարի մի մասն էլ ժողովրդական կրթության գործի համար է սեղի ունենում»:

Պարզ է, վոր կրթությունը, այդ ամենակարող զենքը, պետք է լինի տիրող դասակարգի անքակտելի սեփականությունը և դրա միջոցով էլ պետք է կռիվը շարունակվի բուրժուական տիրապետության դեմ:

«Իսկական շրջանումս էլ պետք է պայքարենք բուրժուականի սապարման համար յեվ բացարձակաբար հայտարարում ենք, վոր ընդունել դպրոցը կյանքից յեվ փաղափականությունից դուրս — դա կեղծիք է» (Լենին, 1918 թ. լուսավ. համառուս. I համագումարի ճառից):

Սակայն նոր դպրոցի գլխավոր նպատակն է ստեղծել նոր կոմունիստական հասարակարգ, վորը գրավական լինի դասակարգային խտրությունների խաղաղ վոչնչացմանը:

Վորպեսզի իրական փաստ դարձնենք մեր առաջադրած նպատակները, անհրաժեշտ է նաև դպրոցական կյանքում ստեղծել միասնական մի գործակցություն, մշակելով ուղիներ աշխատանքային դպրոցների ներքին կառուցվածքի ու բովանդակության համար, և հետզհետե դնել այդ աշխատանքները առողջ հիմքերի վրա:

Այդ իսկ նպատակով, առաջին անգամ Ա. Ս. Խ. Հ. Լուստոգ-կոմատը լույս է ընծայում ներկա կոմպլեքսային ծրագրերը հայկական դպրոցների համար:

Հայկական դպրոցները շուրջ 5 տարի ղեկավարվել են առանց մի ընդհանուր ծրագրի, վորն անշուշտ յուր բացասական կնիքն է դրել դպրոցական կյանքի ներքին բովանդակության վրա:

Մի քանի անհաջող փորձեր՝ ունենալու առանձին, թեկուզ ժամանակավոր ծրագիր, — տվել է միայն այն արդյունքը, վոր հենց իրենք ուսուցիչները իրենց փորձերից հանած յեզրակացություններով կարողացել են ներկա մեր դպրոցական կյանքի դրական կողմերն ուժեղացնել:

Այդ փորձերը մի տեղ ավելի արդյունավետ է արտահայտվել, մի ուրիշ տեղ նվազ՝ նայած ուսուցչական կազմի փորձառություն կամ դպրոցի վարիչի ժամանակակից վոգու պատրաստականությունը: Յեթե նման պատահական փորձերն այստեղ Բագվում կամ Գանձակում տվել են իրենց դրական արդյունքները և դպրոցներն ազատել քաոսային դրությունից, նույնը չի կարելի ասել գյուղա-

կան դպրոցների վերաբերմամբ, ուր գործոն ուժերը կտրված լինելով կուլտուրական կենտրոններից, անկարող եյին ինքնուրույն կերպով մշակել զեթ տանելի ծրագիր իրենց առօրյա պարսպմունքների համար: Ահա այդտեղից էլ առաջ եր գալիս մի ընդհանուր ծրագիր ունենալու այնքան խոշոր պահանջը, վորը կգար ազատելու մեր դպրոցներն ստեղծված խայտաբղետ դրությունից:

Սույն տարվա հունվարի 18-ին Լուստոգկոմատի կողմից հայ նիստում վորոշում է կայանում Ազգային փոքրամասնությունների կից կազմել մի հանձնաժողով և հանձնարարել կազմելու դպրոցական ծրագիր:

Հանձնաժողովի մեջ մտնում եյին կողմից Ս. Մանուգյանը (նախագահ), Աղրկումկուսի կենտրոնի կողմից՝ Վ. Պետրոսյան և Ս. Յերգնիկյան («Կոմունիստի»-ի խմբագիր):

Փետրվար 3-ին այդ հարցի առթիվ տեղի է ունենում Բագվի դպրոցների վարիչների և մի շարք աչքի ընկնող մասնավարժների առաջին ընդհանուր ժողովը, ուր ներկա եյին նաև Համապարհաշնայան հրահանգիչների կոնֆերանսին մասնակցող Ղարաբաղի ներկայացուցիչ Բաբայանը և Գանձակի հայկական դպրոցների հրահանգիչ — Տեր-Իսրայելյանը: Մտքերի փոխանակումից հետո ընդհանուր միասնական ծրագիր ունենալու պահանջը համարվում է անհրաժեշտություն և նույն ժողովում կազմվում է այսպես կոչված տեխնիքական հանձնաժողով, ծրագրի մշակման աշխատանքները տանելու համար: Վորոշվում է հանձնաժողովը կազմել 5 հոգուց, 2 թեկնածուներով, հետևյալ ուսուցիչներից. Ռ. Քաջբերունի, Շուշանիկ Ներսիսյան, Սիրաք Գրիգորյան (նախագահ), Տ. Սաղանդարյան և Գ. Պապյան, — թեկնածուներ՝ Գ. Իսքենդերյան և Պ. Տիգրանյան:

Տեխնիքական հանձնաժողովին տրվում է սկզբունքային հրահանգներ կազմվելիք ծրագրի բնույթի մասին, հիմք ընդունելով Դյու-ի ծրագիրը:

Աղբերջանի առանձնահատուկ պայմաններն ի նկատի ունենալով, մեր յերկրի դպրոցների ծրագիրը պետք է շատ խնդիրներում տարբերվի թե Հայաստանի, Վրաստանի, և թե Համառուսաստանի դպրոցների ծրագրերից: Ներկա ծրագրում նախատեսված է քաղաքի արդյունաբերության և գյուղի տնտեսության ընդհանուր կապը և համաչափ կերպով պահպանված է այդ նոր կազմած ծրագրի մեջ: Տեխնիքական հանձնաժողովի տրամադրություն տակ



եյին դրված այն բոլոր նյութերը, վորոնք մի առ մի հիշված են հանձնաժողովի բացատրությունների մեջ: Վորպեսզի աշխատանքը համարվի հայ ուսուցչության կոլլեկտիվ կամքի արտահայտությունը, վորոշվում է ամեն մի խմբակի ծրագիրը կարգալ համապատասխան խմբակների դասատուների ժողովներում և նկատի առնել նրանց կարծիքները: Նման ժողովներ այստեղ Բագվում տեղի են ունեցել հինգ անգամ և բոլոր խմբակների ծրագրերն են անցել են այդ բովով:

Վարիչներն ակտիվ մասնակցություն են ցույց տվել ժողովներում իրենց ցուցմունքներով:

Ավելին. հանձնարարված է յեղել տեխնիք. հանձնաժողովին ուղարկված լսել թեկուզ անհատ ուսուցիչների դիտողությունները և հաշվի առնել ամեն մի կարծիք: Վորպեսզի զավառական ուսուցչությունն ևս անմաս չմնա այդ կոլլեկտիվ աշխատանքից, կազմված ծրագրերը ուղարկվել են Գանձակի ուսուցչությանը հայտնելու իրենց կարծիքները, նույնպես համագումարին մասնակցող, Նախիջևանի, Ղարաբաղի, Գանձակի և Բագուի ուսուցիչների ընդհանուր ժողովում կարգացվելով առաջին յերկու խմբակների կոմպլեքսային ծրագրերը, հավանություն է գտել: Տեխնիքական հանձնաժողովը մոտ հինգ ամսվա ընթացքում ունեցել է 36 նիստ և յուր կատարած արդյունքների մասին շարունակ զեկուցել Ազգ. փոքր. բաժնին՝ ստանալով այս կամ այն սկզբունքային հարցին վերաբերող համապատասխան դիրեկտիվներ:

Ծրագրի բոլոր աշխատանքները ավարտելուց հետո մանրազրնին քննության է յենթարկվում Լուսժողկոմատին կից գիտական-մեթոդիքական խորհրդում, վորի առաջարկությամբ է հունիսի 29-ին կայացած կոլլեկտիվի նիստում՝ լսելով գիտական խորհրդի նախագահ պրոֆ. Ֆրիդլինի զեկուցումը, հանում է հետևյալ վորոշումը.

«Հաստատել ծրագիրը յեվ համառել այն որինակելի: Կոմպլեքսային սխեմի ծրագիրը կիրառել այն դպրոցներում, ուր դպրոցական խորհուրդներ կզսնեն հնարավոր իրականացնելու սվյալ դպրոցում, նախորդ սահմանով սեղական լուսբաժինների համաձայնությունը»:

Արժե պարգել կոլլեկտիվի վերահիշյալ վորոշման իմաստը: Այս ծրագիրը որինակելի յե ճանաչվում այն չափով, ինչ չափով վոր մինչ այսօր Ադրբեջանի դպրոցների համար նման լրիվ և տեղական

պայմաններին համապատասխանող ծրագիր առաջինն է, վոր լույս է տեսնում հայերեն լեզվով: Ինչպես պրոֆ. Ֆրիդլինը նկատեց, այս ծրագիրը պետք է ոգտագործել Ադրբեջանի ուսու և թուրք դպրոցների համար ծրագիր մշակելու հետագա աշխատանքների ժամանակ:

Մի ուրիշ հանգամանք, վոր առիթ է տվել կոլլեկտիվին արտահայտվելու կոմպլեքսի ծրագիրը կյանքի մեջ կիրառելու մասին: Ինչպես հայտնի յե, նոր ծրագիրը վորպես առաջին փորձ, անհղին խոչընդոտներ հարթելով, պետք է դպրոցական կյանքում իրականացնել: Կոմպլեքսի դասավանդումը պահանջում է նախ պատրաստի ուժեր, համապատասխան դասական պիտույքներ և այլն: Ի նկատի ունենալով, վոր այդ որյեկտիվ պայմանները շատ դպրոցներում բացակայում են—մանավանդ գավառներում,—ուստի հարկ է, վոր դպրոցական կյանքը քառսից դերձ պահելու համար մեծ զգուշությամբ մոտենալ կիրառման ինդրին: Խոշոր ջանքերից և փորձերից հետո յե, վոր հնարավոր պիտի լինի կոմպլեքսային դասավանդումը մարմնացնել մեր կյանքում, իսկ առ այժմ, սկզբնական շրջանում զգուշությունը և լուրջ վերաբերմունքը ամենագլխավոր պայմանը պետք է համարել:

Հենց այդ պատասխանատվության զգացմունքն է թելադրել կազմողներին ծրագրի մեջ գլխավոր առարկաների զիտելիքների ծավալը տալ հավելվածի ձևով՝ կոմպլեքսներից հետո: Այդպիսով տեղերին լայն իրավունք է տրվում կիրառել ծրագիրը հնարավորության սահմաններում:

Ինչ խոսք, ինչպես ինքը կոմպլեքսի սխեմում, նույնպես նաև այս ծրագիրը կատարելություն չի կարելի համարել: Ռեալ կյանքն է, վոր պետք է մշակի, կատարելագործի այն բոլորը, ինչ վոր յենթակա յե կյանքին հարմարվելու պահանջներին:

Այդ ի նկատի ունենալով, խոշոր պարտականությունների առաջ են կանգնած գլխավորապես հրահանգիչները, վորոնք աշալուրջ կերպով պետք է հսկեն կոմպլեքսային ծրագրերի տեղեություն կիրառելու գործին և փորձնական դասերի, ցուցմունքների, շրջանային խորհրդակցությունների միջոցով ձևակերպեն ընդգծած ուղիները: Նույն աշխատանքի փորձերից հանած յեզրակացություններն են, վոր պետք է ժամանակի ընթացքում լրացնեն ներկա ծրագրի թերիները, դրանով ստեղծելու միանգամայն լրիվ ծրագիր հայկական դպրոցների համար:

Ազգային փոքրամասնության խորհրդի նպատակն է տարվա ընթացքում գումարել ընդհանուր խորհրդակցություններ զուտ



ծրագրային հարցերի շուրջը և այդ ժողովների լրացումները հրատարակել բրոշյուրներով, վորոնք կծառայեն ծրագրին վորպես անհրաժեշտ ուղեցույց — հավելվածներ:

Մեզ մնում է մի քանի խոսք ուղղել մեր կուլտուրական ֆըրոնտի մարտիկ — ուսուցչներին, վորոնք վրա յե ծանրացած նոր կոմունիստական սերնդի ծանր և պատասխանատու դաստիարակչական գործը:

Միանգամայն գիտակցում ենք, վոր ներկա մեր աղքատիկ դպրոցական միջոցներով դժվար է ձեռնարկել նման մի աշխատանքի դեթ կիսով չափ կիրառելուն: Այդ դժվարությունը հասկանալի յե դառնում և այն ժամանակ, յերբ մինչև այսօր, յեթե հաշվի չառնենք կարճամյա մանկավարժական կուրսերը, հիմնական ծանոթություն չենք տվել մեր ուսուցչության կոմպլեքսի մասին: Նրանց այսօրվա կատարած աշխատանքները նոր դպրոցի ուժեղացման գործում տարվել են գերմարդկային ճիգերով և իրենց վորոնող միտքը միշտ ստեղծագործական աշխատանք է ցուցադրել քչից շատ բան ստեղծելու հոգատարությամբ:

Շենց այն հանգամանքը, վոր այս կոմպլեքսային ծրագիրը մեր ուսուցչության կուլեկտիվ մտքի արդյունքն է, ապացույց է այն բանին, վոր մշակելով մի այսպիսի լուրջ գործ, իր վրա է վերցնում այն բոլոր դժվարությունները, վորի արժեքը և ամբողջ բովանդակությունը ամենից առաջ ինքը հայ ուսուցչությունն է գիտակցում:

Ներկա ծրագիրը լինելով մեր ուսուցչական լայն խավերի սեփականություն, նա յե, վոր յուր գործնական աշխատանքով պետք է հետագայում մշակի թերությունները և տա վերջնական լրացումը:

Ազգային փոքր, խորհուրդը միշտ պատրաստ է ընդառաջ գնալու ուսուցչության պահանջներին և նրա ամեն սուղը կարծիքը դնելով մեր նոր կառուցվող կյանքի պատվանդանի վրա, կնպաստի դպրոցի միջոցով այն հսկա շենքի կառուցման գործին, վորի առունն է ապագա կոմունիստական հասարակական կյանք:

Խոսք ուսուցչությանն է...

Ա. Ս. Լ. Լուսինյանի կոլեկտիվի անդամ յեվ  
Ազգ. ֆոբամասնությունների Խորհրդի նախագահ  
Ս. ՄԱՆՈՒՑՅԱՆ

## ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո անմիջապես առաջադրվում և աշխատանքի դպրոցի լոգումը, վորը հանդիսանում է աշխատավոր մասսաների կուլտուրական նվաճումների գլխավոր գործոններից մեկը:

Աշխատանքի դպրոցի գաղափարը նոր չէ. մանկավարժության լավագույն ույթեր մեծ ջանքեր են թափել աշխատանքի դպրոց ստեղծելու, բայց նրանց ապագա սակարգային բնույթը թույլ չեր տալիս այդ իրականացնելու: Խորհրդային աշխատանքի դպրոցը իր եյուրթյամբ հիմնովին տարբերվում է մանկավարժության այդ թերեթիկների դպրոցից: Հեղափոխական-մարքսիստական դպրոցը (խորհրդային աշխատանքային) սերտ կերպով կապված է սոց. հեղափոխության հետ և իր եյուրթյամբ կոմունիստական է: Այդ նոր դպրոցը գիտվում է վորպես կոմունիստական դաստիարակության յեվ կրթության վայր:

Այս հիմնական սկզբունքով էլ հանձնաժողովը ներկա ծրագիրը մշակելիս, մոտեցել է բոլոր հարցերին և ձեռնարկել իր աշխատանքները:

Ծրագիրը մեր կյանքին ու իրականությանը համապատասխան դարձնելու համար, մենք ձեռքի տակ ենք ունեցել ու լայնորեն ոգտվել այն բոլոր ծրագրերից ու նյութերից, վորոնք զանազան ժամանակներում հրատարակվել են Ադրբեջանում թե հարևան յերկրներում (խորհրդայնացումից հետո):

Նկատի յենք ունեցել. 1) Բազուկի հայ ուսուցչության վերջին տարիներում կազմած բոլոր աեսակի ծրագրերը, 2) Անցյալ ուսումնական տարում Գանձակի շրջանի ուսուցչական համագումարի արձանագրություններն ու վորոշումները, 3) Ադրբեջանի լուսժողովմատի կազմած ծրագիրը, 4) Դյու-ի,\*) Հայաստանի և Վրաստանի կազմած կոմպլեքսային ծրագրերը և 6) մի շարք նյութեր ու ցուցմունքներ աշխատանքի դպրոցի կազմության և կոմպլեքսային սիս-

\*) Դյու — Государственный Ученый Совет-ի կրճատ ձևն է:



տեմի ուսուցման մասին, վորոնք լույս են տեսել Ռուսաստանի և մեր յերկրի մանկավարժական ամսագրերում և այլ հրատարակություններում:

Հանձնաժողովը հատուկ ուշադրություն է դարձրել մեր յերկրի այն բոլոր առանձնահատուկ պայմանների վրա, վորոնք տարբերում են նրան Ռուսաստանից և նույնիսկ Հայաստանից: Նկատի ենք ունեցել նույնպես մեր յերկրի գավառական-գյուղատնտեսական կյանքն ու պայմանները և Բագվի արդյունաբերական-բանվորական կյանքն իր բոլոր յերևույթներով: Այդ ամենը իրենց հերթին արտահայտվել են մեր կազմած ծրագրի մեջ:

Ներկա ծրագիրը մենք առանձին-առանձին չենք կազմել գյուղի և քաղաքի դպրոցների համար, ինչպես Դյու-ն է արել, այլ այդ ամփոփել ենք մի ծրագրում վորպես միմիանց լրացնող, մի ամբողջություն կազմող: Ամեն մի շրջան և դպրոց իր կյանքի ու պայմաններին համապատասխան նյութեր պիտի վերցնի ծրագրից, ուսումնասիրի, մշակի դպրոցում յերեխաների հետ միասին և կապի մանուկ սաներին քաղաքի և գյուղի հետ փոխադարձաբար:

Ծրագրին կից հանձնաժողովը տալիս է մի քանի մեթոդական—բաց ստրական ցուցմունքներ, թե ուսուցիչը ինչպես պիտի դեկավարվի այս ծրագրովն առաջնորդվելիս:

Ինչ վերաբերում է ծրագրի եյական խնդիրներին ու նրա վոգուն, մենք խիստ հետևողական կերպով պահպանել ենք Դյու-ի թե սխտեմը և թե վոգին: Ծրագրի նպատակն է դպրոցում դաստիարակել մեր նոր կյանքի համար ապագա գիտակից քաղաքացիներ կոմունիզմի գաղափարներով, զինված ուսուցիչության զենքերով:

Ըստ այս ծրագրի յուրաքանչյուր խմբակում անցնելիք նյութը բաժանված է համաձայն տարվա յեղանակների և մարդկանց աշխատանքների փոփոխության առանձին յեռամսյակների: Ամեն մի յեռամսյակում անցնելիք նյութն էլ իր հերթին բաժանված է առանձին-առանձին կոմպլեքսների, վորոնք պիտի մշակվեն և անցնեն դասարանում: Սակայն այդ կոմպլեքսների դասավորման մեջ հանձնաժողովը մի քանի տեղափոխություններ է արել նկատի առ-

նելով Ադրբեյջանի առանձնահատուկ պայմանները: Որինակ՝ աշնան յեռամսյակում «յերեխայի Երազան առնան» և «Հոկտեմբերյան հեղափոխություն» կոմպլեքսները տեղափոխված են յետ ու առաջ, վորովհետև մեր յերկրում բնության փոփոխություններն աշնան ավելի ուշ են սկսվում քան Ռուսաստանում: Ուստի և Հոկտեմբերյան հեղափոխության տոնի կոմպլեքսը պիտի առաջ անցնել աշնան կոմպլեքսից: Ավելացված է «26 կոմունարների սարեգարձ» կոմպլեքսը, վորը չկա վոչ Դյու-ի և վոչ էլ Հայաստանի ծրագրերում հասկանալի պատճառներով, բայց վորը պիտի լինի Ադրբեյջանի ծրագրում, վորովհետև այդ կոմունարների կյանքն ու գործունեությունը բացի ընդհանուր հեղափոխական գործերից, շատ սերտ կերպով է կապված Ադրբեյջանի հեղափոխական մասսաների կյանքի և յերկրի խորհրդայնացման հետ:

Յուրաքանչյուր խմբակի համար ծրագրի վերջում տրված է այդ խմբակում անցնելիք մայրենի լեզվի և մատեմատիկայի գիտելիքների ծավալը: Իսկ IV խմբակում մայրենի լեզվի և մատեմատիկայի ծավալի հետ տրված են նաև բնագիտության և հասարակագիտության առարկայական ծրագրերը, ի նկատի ունենալով, վոր շատ դպրոցներում կարող են դասավանդումները տարվել առարկայական սխտեմով:

V խմբակի ծրագիրը կազմված է առարկայական ձևով: Այդ խմբակն իսկապես ավելի շուտ II աստիճանի դպրոցին է պատկանում, ինչպես և է Ռուսաստանում, Հայաստանում և Վրաստանում: Այդ պատճառով էլ այս խմբակում դասավանդումը ավելի շուտ պիտի տանել լաբորատոր յեղանակով:

Այս ծրագրի մեջ չեն մտած ուսուցիչ լեզվի, թուրքերենի, յերգի, ձեռարվեստի և ֆիզիկուլտուրայի ծրագրերը, վորոնք պիտի առանձին տրվեն վորպես հավելումներ:

IV և V խմբակների հասարակագիտության ծրագիրը մենք անփոփոխ տվել ենք Ադրբեյջանի լուսավորչական կոմիտեի մշակվածը՝ իր մեթոդական բացատրություններով հանդերձ:

Հանձնաժողովը իր կատարած այս աշխատանքը թերություններից զերծ չի համարում: Սա առաջին դժվարին փորձն է, վոր



Դյու-ի ծրագիրը հարմարեցվում է մեր միջավայրին և յերկրի առանձնահատուկ պայմաններին. իբրև առաջին փորձ բնական է, փոր պիտի ունենա իր անխուսափելի թերությունները: Սակայն այդ թերություններն ուղղվելու յեն ուսուցչության կողմից ապագայի ընդհանուր աշխատանքների ժամանակ, իրենց փորձերից հետո:

Այս սկզբունքներով ու նկատառումներով է, փոր հանձնարարվում է ծրագիրը մեր ուսուցչությանն իրականացնելու կյանքի մեջ ըստ հնարավորության և տեղական պայմանների:

#### Հանձնաժողով

## ԿՈՄՊԼԵՔՍԱՅԻՆ ՍԻՍՏԵՄԱՆ Դյու-ի ԾՐԱԳՐՈՒՄ\*)

Կոմպլեքս՝ նշանակում է բարդ:

Կոմպլեքս անվան տակ պիտի հասկանալ իրականությունից վերցրած մի շարք կոնկրետ յերևույթներ, վարոնք խմբավորված են կենտրոնական մի վերոջ գաղափարի կամ թեմայի շուրջ: Դասավանդության ժամանակ կոմպլեքսային հասկացողությունն իր մեջն ամփոփում է նյութի կապակցում, միավորում, համախմբում, բայց նա դրանով չի բավականանում:

Վրանք յենթադրում են, փոր կոմպլեքսային սխեմայի ելուց թյունը կայանում է դպրոցում ավանդվող առարկաների միայն կապակցության մեջ: Յեվ այս տեղից ել նրանք յեզրակացնում են, փոր կոմպլեքսային գաղափարը այնքան հին է, փորքան հին է ինքը մանկավարժությունը, փորովհետև դեռ Պլատոն խոսած է յեղել ռոլոր գիտությունների ներդաշնակության և փոխադարձ կապի մասին:

Կապակցումն ու համախմբումը իսկապես ներկայացնում են կոմպլեքսային սխեմայի եյական հատկանիշերը. սակայն բուն ելուց թյունը դպրոցական առարկաների այդ համախմբումը չէ, այլ կյանքի մեջ իրոք յեղած յերևույթների կապակցության, նրանց ուսումնասիրության, այդ յերևույթների միմիանց փոխազդեցությունների, իրար փոխհարաբերությունների մեջն է կայանում:

Դյու-ի ծրագրի հիմքը վերցված է մարդկության աշխատանքի գործունեյության ուսումնասիրությունը: Այդպիսով ամբողջ ծրագիրը մեզ տալիս է ամբողջովին մի մեծ կոմպլեքս՝ «Ժողովրդի աշխատանքային գործունեյություն» թեմայով: Ինչո՞ւ խորհրդային, բանվորա-գյուղացիական դպրոցի համար հատկապես այդ սխեման է ընտրված:

Իհարկե, դա լուկ պատահականություն չէ: Այստեղ մենք կարող ենք նկատել մի գեղեցիկ համաձայնեցում, ներդաշնակում բանվոր դասակարգի առաջապահ կոմունիստ-մարքսիստների ընդհանուր իդիոլոգիային: Դյու-ի ծրագրերը հիմնված են թե բնագիտական և թե պատմական մատերիալիզմի վրա:

Այդ տեսակետից աշխատանքն է կյանքի հիմք կազմողը:

Մարդու ապրուստի համար հարկավոր է բավարարել նրա կա-

\*) Այս հոդվածից կրճատված է II աստիճանի դպրոցին վերաբերող մասը:



ընթերցողը (ամենից առաջ ուսուցիչը, հագուստ, բնակարան և այլն): Ամեն մի կարիք բավարարվում է բնության վորեւ բարիքի միջոցով: Այդ բարիքները պիտի ձեռք բերվեն, իսկ յեթե նրանք նախնական վիճակում պիտանի չեն լինում գործածության համար, այն ժամանակ պետք է մշակել, ուրիշ խոսքով մարդ պիտի վորոշ աշխատանք գործ դնե, վոր բավարարի իր կարիքները: Մարդն իր աշխատանքը կատարում է վորեւ է գործիքի միջոցով, վորոնց գումարն այն է, ինչ վոր մենք անվանում ենք տեխնիկա:

Մարդն իր կարիքները բավարարելու համար գործ դրած աշխատանքի ժամանակ դիմում է բնական բարիքներին, ոգտագործում նրանց իր տեխնիկայի միջոցով: Գոյություն կուզում իր ապահովության համար մարդկությունը շատ հնուց հասարակական կազմակերպություններ է ստեղծել. այդպիսով մարդկային հասարակությունը կազմվել է մարդկության աշխատանքի գործունեություն ընթացքում:

Ժամանակի ընթացքում աշխատանքի գործիքները կատարելագործվում են, տեխնիկան զարգանում է, բնության բարիքներն ավելի մեծ ծավալով են սկսում ոգտագործել: Առաջ է գալիս ապա և աճում հավելյալ արժեքը, հասարակությունը շերտավորվում է, մարդկային համախմբումները, վորոնք գոյացել եյին արտադրական հարաբերությունների հիմունքներով, փոփոխության են յենթարկվում և կազմում դասակարգային խմբավորումներ. ձևակերպվում մարդկության պատմությունը վորպես դասակարգերի կռիվ պատմություն: Արտադրողական հարաբերությունների փոփոխմամբ՝ փոփոխվում են և իրավական հարաբերությունները, փոխվում է տիրապետողի հայեցակետը նաև իդեոլոգիայում (փիլիսոփայության, բարոյականության, գիտության, գեղարվեստի, և գրականության մեջ): Այդպիսով մարդկային հասարակությունը հասավ յուր այժմյան զարգացման աստիճանին, այսինքն կապիտալիզմից դեպի կոմունիզմի փոխանցման շրջանին: Մեր աչքի առջև տեղի յե ունենում կոմունիստական իրավակարգի պաշտպանության համար պայքար: Այդ պայքարում մենք վոչ թե լոկ դիտողներենք, այլ կամա թե ակամա նրան մասնակիցներ: Այդ պայքարը ընդարձակվում յե ներկայումս միջազգային մասշտաբով:

Այդ ամենը հաշվի է առած Դյու-ի ծրագրերում:

Աշխատանքը մարդու կյանքի հիմքն է. այստեղից էլ մարդկային աշխատանքի գործունեությունը ուսումնասիրության կենտրոնն է դառնում:

Մարդկանց աշխատանքի գործունեությունը այն առանցքն է, վորի շուրջը կենտրոնանում են բոլոր մնացած յերեւոյթները: Մարդկանց աշխատանքի գործունեության ուսումնասիրության ծրագիրը գետեղված է միջին սյունյակում (կենտրոնում): Ձախ սյունյակում գետեղված է բնության ուսումնասիրության ծրագիրը, վորին մոտեցած է մարդու կյանքի և նրա աշխատանքի գործունեության վրա բնության ունեցած ազդեցության տեսակետից: Վերջապես աջ սյունյակում տրված է հասարակության ուսումնասիրության ծրագիրը, վորի մոտեցումը նույն տեսակետով է յեղած:

Ծրագիրը կազմված է ժամանակակից կյանքի վորով և պահանջվում է այդ կյանքի մանրամասն ուսումնասիրություն:

Ծրագրերի կոմպլեքսների համար ընտրված թեմաներն էլ պատահական կամ մտացածին ընտրություն չեն: Հատկապես այն է ընտրված, ինչ վոր պետք է առաջին հերթին դպրոցն ուսումնասիրել իր շրջապատի հասարակական կուլտուրական կյանքից: Կյանքի կուլտուրական պայմանների լավացման համար հարկավոր է վարժեցնել աշխատանքի կանոնավոր կազմակերպությանը, վորի համար էլ յուրաքանչյուր յեռամսյակի սկզբում ու վերջում ծրագիրը պահանջում է հաշվետվություն կատարված աշխատանքների և ձեռք բերած ունակությունների ու գիտելիքների, պահանջում է նաև հետևյալ շրջանի աշխատանքների կանոնավոր ծրագրումն: Ամբողջացման, միացման և համախմբման ձգտումն ինքնըստինքյան վարժեցնում է կազմակերպման գիտակցությունը:

Ինչ վերաբերում է «առողջության պահպանություն» թեմայով կոմպլեքսին, ավելորդ կլինի ապացուցել ծրագրի մեջ մտցնելու նրա անհրաժեշտությունը: Ամեն մեկը, ով ծանոթ է մեր իրականությանը և միաժամանակ թշնամի չե մեր գյուղացուն, բանվորին ու նրանց յերեխաներին, պիտի վորջունի այդ:

Հեղափոխական տոներին վերաբերող թեմաները հասկանալի յե, վոր չեյին կարող մուտք չունենալ բանվորա-գյուղացիական իշխանության դպրոցական ծրագրում, յերբ այդ իշխանությունն է սուցիալիստական իրավակարգի իրականացնողը և ուրիշ յերկրների բանվորա-գյուղացիությունը հեղափոխականացնողը: Այդ տոները յեբեխաների մեջ կոմունիստական ինքնագիտակցություն և կոմունիստական տրամադրություն զարգացնելու համար ամենապայծառ մոմենտներն են ցուցադրում:

Այդ տոները տալիս են յերեխաներին ավելի մեծ հուզումներ



և ազդում նրանց հոգեբանությունն վրա ու նպաստում նրանց գեղարվեստական դաստիարակությունը:

Այն հերոսական շրջանները, վորոնք կապված են բանվորագյուղացիական տոների հետ, այնպիսի բնավորություն են կրում և այնպիսի բովանդակություն ունեն, վոր կարող մանկավարժը նրանց կարող է ամեն տեսակետներով դատադրածել և ցանկալի ուղղությունը տալ: Մնացած թեմաները վերցված են ազգաբնակչության անմիջական շրջապատի աշխատանքի կյանքից և պայմաններից, և վորովհետև հաճախ դրանք փոփոխվում են ըստ յեղանակների, ուստի և կոմպլեքսների թեմաներն ել յերբեմն կրում են համապատասխան լեզանակի անուն:

Յուրաքանչյուր տարում անցնելիք կոմպլեքսի նյութի ծավալը արտահայտված և սահմանավորված է մի ընդհանուր թեմայով: I տարում՝ ընտանիքն ու դպրոցը, II տարում՝ գյուղի և քաղաքը, III տարում՝ շրջանը, գավառը, յուր յերկիրը: IV տարում՝ Խորհրդային Միությունը և ամբողջ աշխարհը: (Մեր ծրագրով IV տարում անցնում ենք Ադրբեջանը և V-ում Խորհրդային Միությունը): Ծավալի ընդլայնումը կատարվում է աստիճանաբար՝ պահպանելով, իհարկե, ընդհանուր սկզբունքը — մերձավորից դեպի հեռուն:

Պեսակաճ Գիս: Կան Խորհրդի (Гос. Ի Մանկավարժական-Գիսական Սեկցիայի առաջին նամակը ԿՈՄՊԼԵՔՍՈՅԻՆ ԴԱՍԱՎԱՆԻԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ):

## ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑԻ ԶԲԱՂՎԵԼԻՔ ԵՅԱՎԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ\*)

Առաջին աստիճանի դպրոցներն զբաղեցնող հարցերից ամենաառաջին տեղը պիտի տալ դաստիարակության խնդրին, վորը բնորոշում է վորոշ չափով և դպրոցի վոգին:

Ամենից առաջ դպրոցը յերեխայի մեջ պիտի դարձնի կենդանի հետաքրքրություն դեպի բնական յերևույթներ և հասարակական կյանքը: Դրա համար հարկավոր է վոր դպրոցը սերտ կապ ունենա ազգաբնակչության, նրա աշխատանքների և տնտեսական կյանքի հետ: Դասավանդման ժամանակ պիտի հենվել յերեխային ծանոթ միջավայրի, նրան հայտնի կոնկրետ փաստերի վրա: Ուսուցման գործում անհրաժեշտ է հետախուզական մեթոդ, վորը իր հերթին առաջին տեղն է բերելու բնական գիտություններն ու աշխատանքը:

Առաջին աստիճանի դպրոցի դաստիարակչական յերկրորդ խնդիրն է՝ յերեխային սովորեցնել զբի յեվ գիտության մեջ փրկելու իր մեջ յերեվան յեկող հարցերի պատասխանները, նրան գիտակցության բերել, վոր զրքերից նա կարող է իմանալ, թե ոչ կամ այն հարցի վերաբերմամբ ինչ յեզրակացություն է հանգել մարդկությունը: Սրանից հետևում է ուրեմն այն անհրաժեշտությունը, վոր առաջին աստիճանի դպրոցում անգամ մեծ տեղ պիտի տալ ինքնուրույն ընթերցանության, փոխել դասագրքերի բնույթը և լայնացնել ընթերցանության գործը:

Յերրորդ գլխավոր խնդիրն է՝ զբաղեցնել ու սովորություն դարձնել յերեխաների մեջ ապրելու, սովորելու յեվ աշխատելու կոլեկտիվ ձևով: Սրանով է բնորոշվում դպրոցական կյանքի կազմակերպման բնույթը, յերեխաների ինքնավարությունը, փոխադարձ ոգնությունը դադարաբար և այլն: Այստեղից արդեն բխում է պարապմունքի մեթոդը՝ տեսածի և լսածի կոլլեկտիվ մշակումը, ընդհանուր ուժերով վորոշ յեզրակացությունների հանգելը և աշխատանքի բաշխում կատարելը՝ ըստ ընդունակությունների և ույթների: Այսպիսով բնորոշվում է դպրոցի աշխատանքային բնույթը և բացի դրանից դպրոցական աշխատանքի — այն է կոլլեկտիվ և

\*) Հոգվածից վերցված է միմյայն I աստ. դպրոցին վերաբերող մասը:



ստեղծագործական աշխատանքի ընդլայնումը: Անհրաժեշտ է նույնպես լայն տեղ տալ գեղարվեստին, վորը առաջ է բերում կոլլեկտիվ ապրումներ և կրթում հասարակական բնագոյները:

Բացի այս դաստիարակչական խնդիրներից, դպրոցի առջև դրված է նաև յերեխաներին վորոք գիտելիքների յեվ ունակությունների պաշար ստու խնդիրը, վորը հետագայում հնարավորություն պիտի տա նրա ինքնակրթությանը, հաղորդակից անի մարդկության կուլտուրական կյանքին և պետք կլինի նրա առորյա կյանքի ընթացքում:

Այդ գիտելիքներն են. ա) կարգալ-գրելը, բ) հաշվելն ու առարկաների ձևերի վորոշելը (թվաբանություն և տարրական յերկրաչափություն), գ) ծանոթություն ընթերցան հիմնական որենքներին (ելեմենտար հասկացողություն ֆիզիկայի, քիմիայի և բիոլոգիայի մասին), դ) ծանոթության մարդու մարմնի կազմվածքի և նրա կյանքի մասին, ե) ֆիզիկական և տնտեսական աշխարհագրության մասին, զ) գաղափար այժմյան ժողովրդների տնտեսական-քաղաքական, կուլտուր-կենցաղային կյանքի մասին, ը) գաղափար խորհրդային հանրապետության տնտեսական, քաղաքական և կուլտուր-կրթական կյանքի մասին, թ) ծանոթություն մարդկության անցյալի կյանքի մասին:

Ի հարկե, անթույլատրելի է առաջին աստիճանի դպրոցի 8-13 տարեկան յերեխաներից պահանջել կազմակերպված աշխարհահայացը, կամ հիմնավորված քաղաքական դաստիարակություն և կամ պրոֆեսիոնալ պատրաստություն:

Դրանց չպիտի հետամուտ անգամ լինել: Առաջին աստիճանի դպրոցի հոգսը պիտի լինի յերեխային տալ այն գիտելիքները, վորոնք կնպաստեն նրան մտնելու ներկայի կուլտուրական կյանքի մեջ: Յերեխան գրել-կարդալ պիտի իմանա, վորովհետև գրագիտությունն է մերձեցնում մարդկանց, հնարավորություն ստեղծում հարաբերության մեջ մտնելով մարդկանց հետ՝ հաղթահարելու տարածությունն ու ժամանակը և ընդլայնելու իրենց սահմանափակ փորձերը մարդկության ընդարձակ փորձերով: Դպրոցը պիտի ծանոթացնի յերեխային մատեմատիկական գիտելիքների հետ, վորովհետև այդ գիտելիքներն են հիմք կազմում մարդու գործունեյությանը, մասնավորապես նրա տնտեսական գործունեյության ժամանակ: Անհրաժեշտ է, վոր դպրոցը ծանոթացնի յերեխային ընթերցան հիմնական որենքների հետ, գաղափար տալով բնագիտական և աշխարհագրական գիտությունների մասին, վորովհետև դրանք են նրան միջոց տալիս ծանոթանալու բնական յերևույթների հետ

և ծառայեցնելու իր նպատակներին: Առանց այդ գիտությունների յերեխան յենթարկված կմնա միջնադարյան անտիպաղաշտությանը: Համաշխարհային պատերազմը դրդեց մեզ հետաքրքրվելու հարևան ժողովուրդների կյանքով: Դրսի յերկրների քաղաքական-տնտեսական կյանքի ծանոթացումով, յերեխան հետաքրքրվում է համեմատության ե առնում մեր կյանքը: Այդ ամենը ելեմենտար կերպով պիտի հաղորդել յերեխային, վորպես այդ հասարակության անդամի: Յեվ վերջապես մոտիկ անցյալի մեր կյանքը—պատերազմը, հեղափոխությունը, քաղաքացիական պատերազմները, վորոնք հիմնովին հեղաշեցին մեր հին կյանքը, բոլորն ել հետաքրքրություն են դարթեցնում յերեխայի մեջ դեպի այդ մոտիկ անցյալը և ապա ավելի հեռավոր անցյալը: Յերեխան պիտի գիտենա մարդկության զարգացման գլխավոր շրջանները և դեպքերը, վորպեսզի կարողանա հասկանալ ներկա և ապագա հասարակական զարգացման ուղղությունը: Այդ բոլոր հարցերի մասին յերեխան մեծ հետաքրքրություն ունի, միայն պիտի իմանալ կապել այդ հետաքրքրությունը յերևույթներն ուսումնասիրելու հետ:

Ինչպես իրականացնել գործնականում այս խնդիրները:

Հին դպրոցը կյանքից բոլորովին կտրված եր, մեկուսացած: Այդ մեկուսացումն իր գաղաթնակետին եր հասնում որիորդների ինստիտուտներում, կադետների կորպուսներում և այլ գիշերոթիկ դպրոցներում: Այդ հիմնարկություններում յերեխաները դաստիարակվում եյին առանց շփում ունենալու շրջապատի կյանքի հետ: Բոլորն ել այժմ դատապարտում են այդ փակ ուսումնական հիմնարկությունները: Բայց ձիշտը խոստովանած, միթե մեր մանկատներից շատերը չեն դրված կյանքից մեկուսացման այդ պայմաններում, միթե մեր դպրոցները բավարար չափով կապված են ժողովրդի աշխատանքային կյանքի հետ:

Ժամանակակից մանկավարժներից շատերը ներկա կյանքի բարդ յերևույթներից խուսափելով, ձգտում են փակվել դպրոցի չորս պատերի մեջ: Յեվ, դժբախտաբար, ժամանակակից դպրոցների մեծամասնությունը ներկայացնում են մեկուսացած դպրոցի տիպար: Շրջապատի կյանքի և դպրոցի փոխադարձ ազդեցությունը չկա, և դպրոցը նույն չափ ոտար է մնում ազդաբնակությանը, ինչպես առաջ եր:

Հարկավոր է ամեն միջոցով վերականգնել այդ կապը: Այդ կապը վոն թե պիտի կայանա նրանում, վոր ուսուցիչը դասարանում անցնելիք նյութը, շրջապատի կյանքը դարձնի, այլ ստեղծե-



լու պայմաններ՝ դպրոցի և ազգաբնակչության փոխադրեցությունների համար:

Այդ կապը նրանց մեջ չպիտի արտաքին բնավորություն կրի, նա պիտի արտահայտվի դպրոցական ամբողջ աշխատանքների ընթացքում, կազմի այդ աշխատանքների անբաժան մասը: Դպրոցը պիտի ներգործի կյանքի վրա: Կարևորն այն չէ, թե վորքան ոգուտ կլինի դպրոցի միջամտությունը կյանքի մեջ, այլ կարևորն այն է, վոր դպրոցը աչքերը չփակի կյանքի դիմաց, ձգտի դործոն մասնակցություն ունենալ այդ կյանքում: Վերցնենք որինակ՝ յերեխաները դպրոցում լսում են, վոր բանջարանոցներում բույսերի վնասատուներն են յերևացել և սովորել են նրանց դեմ կռվելու միջոցը: Թող գնան, յեթե ուզում են, իրենց ոգնությունն առաջարկեն վնասատուների դեմ կռվելու համար: Թող ոգնեն փոստում համակներ բաժանելու, համակներ գրելու: Հասակավոր դպրոցականները թող զանազան տնտեսագիտական տեղեկություններ հաղորդեն գյուղացիներին՝ ոգավելով դպրոցի գրադարանից և այլն: Այս խնդրում դժվար է վորևե շաբլոն խորհուրդ տալ: Ուսուցիչը ոգավելով ամեն մի հարձար առիթից, ինքը պիտի դրդի յերեխաներին այս կամ այն միտքը, թե տվյալ դեպքում ի՞նչ պիտի անել և ի՞նչպես անել: Ի հարկե միայն նրանց նախաձեռնությունը դրդելով, և վոչ թե իր կողմից նրանց վզին աշխատանք կապելով:

Մյուս կողմից ել ազգաբնակչությունը ինքը պիտի հայի դպրոցին վորպես իր սեփական, մտերիմ և անհրաժեշտ սեփականությունը: Դրա համար անհրաժեշտ է, վոր ուսուցիչը ծանոթացնի ազգաբնակչությանը դպրոցում իր կատարած աշխատանքների հետ: Նա պիտի պատմի նրանց դպրոցական կյանքի ու կարիքների մասին, ցույց տա բավարարելու միջոցները, հասկացնել տա ուսման անհրաժեշտության մասին և այլն: Յեվ յեթե ուսուցիչը կարողացավ կապել ազգաբնակչությանը դպրոցի հետ, այդ ազգաբնակչությունը դպրոցին ոգնություն կհանի ամեն մի դեպքում ել:

Անցնենք այժմ աշխատանքային դպրոցին:

Ժողովրդին ամենամոտիկն ու հասկանալին, գուցե, աշխատանքի դպրոցն է: Դեռ հեղափոխության սկզբում, հեղափոխական աշխատավորության կողմից հայտարարվեց, վոր մեր դպրոցը պիտի լինի աշխատանքի դպրոց: Սակայն ի՞նչ բան է աշխատանքի դպրոց: Աշխատանքի դպրոց ասելով ամեն մեկը իր տեսակովն եր հասկանում, և այսօր ել դեռ հեղափոխությունից այսքան տարիներ հետո, կրկին կարիք է զգացվում խոսելու աշխատանքի դպրոցի մասին: Աշխատանքի դպրոց ասելով, մենք չենք հասկանում մեխանիկ աշ-

խատանքի դպրոց, կամ աշխատանքի տեսակները մշակող վայր, վնչ: Մենք կանգնած ենք մեր հեղափոխության հայտարարած աշխատանքի դպրոցի սկզբունքի վրա. բացատրենք, թե ինչ բովանդակություն ենք դնում աշխատանքի դպրոց հասկացություն հանդիմանում:

Նախ ուսուցման կենտրոնը դպրոցում պիտի լինի ազգաբնակչության աշխատավորական կյանքն անցյալում յեվ ներկայում, — սա ամենաեղանակն է:

Դպրոցական ծրագրի բոլոր հարցերում աշխատանքի դպրոցը մոտենում է աշխատանքի տեսակետով. մատեմատիկայի դասին, ֆիզիկայի, քիմիայի ժամանակ, թե բիոլոգիայի, կամ պատմությանը, բոլոր ժամանակներումն ել պիտի վերաբերվել աշխատավոր ժողովրդի արատադրական տեսակետով:

Յերկրորդ՝ դպրոցական կյանքի կառուցման ընթացքում յերեխաների արտադրական կյանքը պիտի գլխավոր, գերիշխող դեր խաղա: Այստեղ, ի հարկե, ամենագլխավորը աշխատանքի գործունեությունը ընկռությունն է. չե՞ վոր ջուր կրելն ել, փայտ կտտուրելն ել աշխատանք է, ինչպես և դեղատու բույսերի հավաքումը, պլակատներ նկարելը, դպրոցական թանկարանի կազմակերպումը և այլն — դրանք ամենը նույնպես աշխատանքներ են:

Աշխատանքի ընկռության խնդրում պիտի դեկավարվել յերեխաների հետաքրքրությունը նկատի ունենալով, քե ինչպես են նրանք պակեբացնում արտադրողական աշխատանքը, և վոչ թե դեկավարվել հասակավորների հասկացությունը: Յերեխայի հասկացությունը և պատկերացումը արտադրողական աշխատանքի մասին ժամանակի ընթացքումն է աստիճանաբար մոտենում հասակավորի պատկերացմանը: Ապա աշխատանքի տեսակի ընտրության դեպքում անհրաժեշտ է ընտրել կոլեկտիվ բնավորություն կրող աշխատանքի ձևեր: Կոլեկտիվ աշխատանքը դաստիարակչական նշանակություն ունի:

Յեվ վերջապես մենք պաշտպան ենք աշխատանքի դպրոցին նաև այն տեսակետով, վոր աշխատանքային մեքոդով ուսուցումը համաբնական եմք ավելի կատարելագործված մեքոդ: Սկզբներում յերեխաներին յուրացնել եյին տալիս վարևե միտք կամ փաստ, հետո անցան տված դասի բացատրությունը: Հետևյալ քայլն եր դիտողական ուսուցումը, վորից անցան լաբորատոր մեթոդի, յերբ յերեխան փորձի միջոցով ստուգում է իրեն հաղորդած գիտելիքը և, վերջապես, ժամանակից մանկավարժությունը առաջ բաշեց աշխատանքի



մեթոդը, յերբ յերեխան կարող է ավելի լրիվ կերպով ուսումնասիրել առարկան և ներգործել նրա վրա: Մեր դպրոցը պիտի կարողանա ոգտագործել վերև հիշված բոլոր մեթոդները: Ուսուցիչը հիմնված յերեխաների պատրաստության և պատկերացումների վրա, պետք է կարողանա պարզ ու հասկանալի կերպով բացատրել յերեխային յերևույթները: Դիտողական իրերը դպրոցում կրկին կարևոր տեղ պիտի բռնեն, նկարները, զանազան կոլլեկցիաներ, մոդելներ և այլն կազմելու յեն դասավանդման անբաժան մասը: Դպրոցը պիտի լայն չափով ոգտագործի եքսկուրսիոն մեթոդը, վորը դիտողական ուսուցման ձևի ընդարձակումն է: Կարելի յե փորձնական աշխատանքներին լայն ասպարեզ տալ, բայց աշխատանքի մասը—մոդելներ պատրաստելը և ստեղծագործական վերաբերմունքը դպրոցում պիտի բացառիկ տեղ գրավեն:

Այդպիսով աշխատանքը դպրոցական ծրագրի կենտրոնն է կազմում, աշխատանքը դպրոցական համայնքի կյանքի անբաժան մասն է, աշխատանքը սովորելու և ուսումնասիրելու մեթոդն է դառնում:

ԿՐՈՒՊՍԿՈՑԱՆ

## ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳԻՐԸ

(Պ. Պ. Բլոնսկու գեկուցումից)

Յերբ Գիտական-Մանկավարժական հանձնաժողովը ձեռնարկեց աշխատանքի դպրոցի համար նոր ծրագիր կազմելու, առաջին խնդիրը, վորի վրա հանձնաժողովն իր գլխավոր ուշադրությունն է դրանից Գիտական-Մանկավարժական հանձնաժողովը աշխատել է շեշտել այն գաղափարը, վոր այդ ձեռք բերվելիք ունակություններն ու վարժությունները չպիտի ընդունեն առանձին-առանձին դասերի կերպարանք, այլ դրանք պիտի ձեռք բերվեն անցնելիք նյութի մշակման ընթացքում:

Յեվ յեթե մենք դիտելու լինինք անցնելիք նյութը, ամենից առաջ աչքի կնկնի այն բնորոշ հանգամանքը, վոր շարունակ ձրգտում է նկատվում մի հայտնի ամբողջություն ստեղծելու: Ծրագիրը ձգտում է վոչնչացնել գիտելիքների այն ազատ ու իրարից անկապ ավանդումը, վորը գոյություն ունեն հին դպրոցում: Յեթե վերցնելու լինենք առաջին թե յերկրորդ աստիճանի դպրոցի (I խմբակի) ծրագրերը, ամեն տեղ ել կնկատենք միևնույն կառուցվածքը—յերեք սյունյակներ՝ բնությունը իր բոլոր հարստություններով, վորի մեջ և մարդը վորպես բնության անդամ, յերկրորդ՝ բնության այդ հարուստությունների և մարդու ույժի ոգտագործումը, այսինքն մարդու աշխատանքի գործունեությունը և վերջապես, յերրորդ սյունյակում հասարակական կյանքը, կամ այն, ինչ բղիճում է մարդու աշխատանքի գործունեությունից: Դրանով ծրագրին տրվում է այն ամբողջությունը, վորը մինչև այժմ բացակայել է հին դպրոցում:

Այդպիսով առաջին աստիճանի դպրոցի ծրագիրը կազմված է ըստ ուսումնական տարիների այն սկզբունքով, վոր մոտիկից անցնում է դեպի հեռուն, յերեխայի անմիջական շրջապատից աստիճանաբար դեպի համաշխարհայինը: Ուսման առաջին տարում բոլորը կենտրոնացած է յերեխային անմիջական կերպով շրջապատող կյանքի աշխատանքի շուրջը, վորի վրա ավելանում է յերեխային շրջապատող բնության ուսումնասիրությունը տարեկան իր փոփոխություններով, և ապա յերեխային շրջապատող հասարակությունը՝ ընտանիքը և դպրոցը:

Յերկրորդ տարվա նյութը մի փոքր ընդարձակվում է: Այստեղ բոլորի հիմքը և կենտրոնական թեման է յերեխայի ապրած գյուղի կամ քաղաքի թաղի աշխատավորական կյանքը, վորը լրացվում է գյուղի կամ թաղի աշխատավոր հասարակության մասին յեղած



տեղեկություններով: Մյուս կողմից այդ աշխատավորական կյանքն ուսումնասիրելիս, յերեխային հասկանալի կերպով պիտի ծանոթացնել մարդուն շրջապատող կուլտուրական բույսերի, ոգի, ջրի, հողի և ընդհանրապես կենդանի բնություն հետ:

Յերբորդ տարում արդեն, ուսումնասիրվում է տեղական տրնտեսական կյանքը, յերեխային հասկացողություն մասշտաբով: Տեղական տնտեսական կյանքի այդ ուսումնասիրության ընթացքում մի կողմից տրվում են համապատասխան գիտելիքներ ֆիզիկայից, քիմիայից, տեղական բնությունից, մյուս կողմից ուսումնասիրվում են այդ շրջանի հասարակական հիմնարկները և ծանոթացվում տեղական կյանքի անցյալի դեպքերի հետ:

Վերջին տարում ամբողջացվում է այս ընդարձակումները և յերեխան ծանոթանում է այստեղ Ռուսաստանի և ուրիշ յերկրների աշխարհագրության, պետական և տնտեսական կյանքի հետ:

Այս աշխատանքը, վորով անցնելիք նյութը բաժանվում է ըստ տարիների: Յեթե այդ նյութը համեմատենք հին դպրոցում անցնելիք նյութի ծրագրի հետ, մենք թե վորոշ նմանություն կգտնենք և թե տարբերություն: Այստեղ նմանությունը նրանում է կայանում, վոր առաջ ել առաջին աստիճանի դպրոցական աշխատավորը սկսում էր ընտանիքից, դպրոցից, յերեխային անմիջական կերպով շրջապատող կյանքից: Ամեն մի դասագրքում սովորաբար տրվում էյին տարվա յեղանակները: Նույնը և հետևյալ տարիներում: Բնագիտական մասն, ի հարկե, առաջ ել գոյություն ունեւր դպրոցներում: յերեխային սովորեցնում էյին մի րդու շրջապատի բույսերի և կենդանիների մասին, մասամբ ծանոթացնում ֆիզիկայի և տեղական շրջանի առանձնահատկությունների հետ: Այնպես վոր այս ծրագիրը խիստ թուիչ և բեկում չի առաջ բերում սովորական պատրաստված ուսուցչի համար, վորը իր նյութի մեծ մասը մշակած ունի և իր պրակտիկայի ընթացքում արդեն գործադրած է: Սակայն մյուս կողմից այս ծրագիրը ըստ յերեւոյթին մեծ թուիչ ունի նրանով, վոր նա ամեն նյութին մոտենում է սկզբունքային տեսակետից և նրանց վորոշ բնավորություն է տալիս: Այսուհետև այս ծրագիրը դպրոցներում գործադրվելիս, դպրոցում ավանդվող կենտրոնական առարկան պիտի լինի աշխատանքը, վորն արվում է բնության մեջ և վորը ներկայացնում է հասարակական կյանքի հիւսքը:

Այսպիսով, ուրեմն, ծրագիրը մի կողմից աշխատանքի դպրոցական կյանքը դնում է աշխատանքի ուղիի վրա, կենտրոնը դարձնելով աշխատանքը, վորը բնության վրա ազդող և հասարակական կյանքի բմբունման բանալին է: մյուս կողմից նա ձգտում է ըստ հնարավորության նկատի առնել ուսուցչի պրակտիկան, ոգտագործելով այն ներկայի պահանջների համեմատ:

## Ա Ռ Ա Ջ Ի Ն Խ Մ Բ Ա Կ

### Ա. ՅԵՌԵՄՅԱԿ

#### Ա. Շ Ո Ի Ն.

#### 1. Առակերների նախադրոցական կյանք

(Զույց նուկների հետ)

| Կնուրյուն յեկ մարդ                                               | Ա. Շ Ո Ի Ն                                                                                                                                                                                                                                                                                                                     | Հասարակական կյանք                                                                                               |
|------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------|
| Բնության յերեւոյթները ամբողջ (յեղանակը, բույսերը և կենդանիները): | Սովորեցնել աշակերտներին մանկական լեզվով ազատ արտահայտել իրենց ամառային տպավորությունները: Զույց աշակերտների ամառային ապրումների, խաղերի և իրենց ծնողների աշխատանքների մասին: Ազատ նկարներ, և կավից կաղապարում շոշափած նյութերի շուրջը: Պատրաստած իրերը հավաքել դասարանական հաշվետվության համար: Համարանք իրերով 10-ի շրջանում: | Աշակերտների ընտանիքի կազմը և նրանց աշխատանքը: Աշխատանքի տեսակները աշակերտի ընտանիքում և բաշխումը անդամների մեջ: |

#### 2. Առակերի ծանոթությունը դպրոցի յեկ նրա աշխատանքների հետ.

| Նքսկուրսիաներ դեպի դաշտ, պարտեզ, այգի, անտառ և այլն: Հավաքել տերևներ, բույսեր, սերմեր, կենդանիներ, հանքեր և այլն: դպրոցում կենդանի անկում և թանկարան կազմելու համար: Նքսկուրսիաները կազմակերպել աշնան սկզբին, միջին և վերջին բնության փոփոխությունները և հարցեր առաջադրել, թե ինչու են նրանք դպրոցի յեկի և ինչպես անել, վոր ամենքն էլ իրենց լավ զգան դպրոցում: Գաղափար դպրոցի տարրական կարգապահության մասին: Գաղափարներ կարգի բերել և դարձրել: Զարգարել դասարանը հավաքած նյութերով և կազմել կենդանի անկում: Գաղափարներ պիտույքներին ծանոթացնելու անցնել գումար | Աշակերտների դպրոցական կազմակերպություն սկզբնավորությունը (որապահություն, կարգ պահելը): Աշակերտների հետ մշակել կարգապահության տարրական կանոններ: Գրագիտություն և ընթերցանությունը աշակերտի ընտանիքում: |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
## Բ Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

### ՏԵՍԱԿԱՆ

Հողի ուսումնասիրությունը. Հող և յենթահող. հողի տարրական մեքենայական անալիզը. Հողի մեջ լուծելի աղերի ներկայութիւնը: Բույսին անհրաժեշտ աղերը: Ծանոթանալ աղութիւն, ծծմբաթիւն, բորակաթիւն, ֆոսֆորաթիւն, թեթեւ մետաղների և աղերի հետ:

Հողի առաջանալը. հողմահարութիւն (виветривание):

Որգանական նյութերի գոյանալը: Կենդանիների և բոյսերի դերը հող գոյանալիս: Անձրև-վորդ, խլուրդ և այլ հողափոր կենդանիներ:

Հողերի գոտիներն Աղբբեջանում (դաշտային և լեռնային շրջանում): Հողի բերրիութեան վերականգնելը. գյուղատնտեսութեան սիստեմները:

Հողի մեքենայական մշակումը. Փուխը և պինդ հողի ջրունակութիւնը, հողի մագաղանութիւնը, ջրի ծծվելը, ոգի և ջրի քանակը հողի մեջ: Ստորերկրյա ջրերի գոյանալը:

Հողի մշակման գործիքներն ու մեքենաները մեր յերկրում և արևմուտքում (Գերմանիա, Անգլիա, Ամերիկա):

### ԳՈՐԾՆԱԿԱՆ

Դիտել ձորափին, գետափին, ծովափին կամ հողի այլ կտրվածքների վրա հողը և յենթահողը: Վորոշել կավի, ավազի, բուսահողի ներկայութիւնը և համեմատել այդ հողերի նմուշների կազմութիւնը: Ապացուցել ջրի և աղաթիւնի լուծվածքների ոգնութեամբ լուծելի աղերի գոյութիւնը հողի մեջ. համեմատել աղերի քանակը՝ գոլորշիացնելով լուծվածքները: Այլելով՝ վորոշել բույսի աղերի (մոխիր) քանակը տոկոսներով: Կազմել բույսին անհրաժեշտ աղերի կոլլեկցիա:

Դիտել հողմահարութեան հետքերը շրջապատի ժայռերի վրա: Դիտել տերևների, արմատների, կենդանիների ներկած մնացորդները հողի մեջ: Կազմել հողերի կոլլեկցիա:

Հողերի արհեստական պարտացումը (խոպան, ցել կամ հերկ, աղբն, մոխիր, աղբը, պտղափոխութիւն, յեռադաշտ, բազմադաշտ):

Հողի մշակման ձևը մեր յերկրում:



Ջուրը հողագործության մեջ: Ջրովի և անջրդի հողագործության շրջաններն Ագրբեջանում: Տեղումների բաշխումները Անդրկովկասում և Խորհրդային Միության այլ յերկրամասերում:

Արհեստական վորոգման նշանակությունը հատկապես Ագրբեջանում: ջրանցքների կառուցումը:

### ԲՈՒՅՍԵՐԸ

Միաբլիշ և բազմաբլիշ բույս և կենդանի: Բլիշի կազմությունը և կյանքը: Աճեցողություն և բազմացում:

Աշխատանքի բաժանումը բլիշի և բազմաբլիշ բույսերի ու կենդանիների մեջ:

Գաղափար հուսվածքի մասին: Բուսական հյուսվածքներ:

Սերմ. — Սերմի գերը, սերմի քանակը բույսի վրա և դրա նշանակությունը: Սերմի կազմախոսական մասերի նշանակությունը:

Մանդատու նյութերը սերմի մեջ (ոսլա, ճարպ, սպիտակուց): Սերմերի և պտուղների գործածությունը մարդու և կենդանիների սննդառությունը գործում: Սերմի տարածման միջոցները: Պտուղը իբրև սեր-

Փորձով ցույց տալ ողի և ջրի գոյությունը հողի մեջ: Ապացուցել հողի մաղականությունը ջրի ոգնությունը:

Ջրասեր և չորային բույսերի առանձնահատկությունների ուսումնասիրությունը: Ջրելափորներ: Բույսերի հարմարացումները չորային պայմաններին: Պատրաստել Ագրբեջանի բնական և արհեստական վորոգման քարտեզ:

Միկրոսկոպի տակ դիտել աճող բույսերը. (պտուղներ, արմատի ծայր և այլն):

Մանրամասն զննում միկրոսկոպի տակ ինֆուզորիայի, տարբական անդամատու մոր և ե բույսի և կենդանու:

Ծանոթանալ զանազան սերմերի հետ: Սերմերը հատելով (ջրի մեջ փափկացնելուց հետո) և բանալով՝ ծանոթանալ կազմության հետ:

Կազմել սննդատու սերմերի բաղադրության դիագրամներ: Փորձով պարզել խոնավության, ջերմության, թթվածնի նշանակությունը ծլող սերմի համար:

մի տարածման միջոց:

Պտուղների տեսակները:

Պողաբերական շրջաններն մեր յերկրում: Հացահատիկներ արտահանող յերկրներ (Ռուսաստան և Ամերիկա):

Հացահատիկների շրջաններն Ագրբեջանում:

Արմաս. — Նրա ձևերը և ձևափոխությունները:

Մարդու և կենդանիների գործածած սննդատու արմատները: Արմատի կազմությունը: Արմատի ծածած աղերը:

Յոդուլն — Նրա ձևերը և ձևափոխությունները: Գաղափար փայտանյութի մասին. բնի տարեկան ողակները կեղև:

Անոթային սխեմա միաշաքիլավորների և յերկշաքիլավորների մեջ: Նյութերի շարժումը ցողունի մեջ, նրա պատճառները:

Պատվաստի կանոններ, բազմացումը ընձյուղներով, պտուղներով:

Տերեվ. — Նրա ձևերը և կազմությունը: Հերձանցքների դերը, քլորոֆիլային բլիշների դասավորությունը: Բույսի կանաչելու պայմանները. հարմարումները արաք ին պայմաններին: Բույսերի և կենդանիների կապը: Նյութի շրջանառությունը, նեխումն, բակտերիաներ:

Կազմել զանազան արմատներից ժողովածու: Պատրաստել ձակնդեղից շաքարի լուծվածք: Միկրոսկոպի տակ ծանոթանալ արմատի կազմության հետ: Արմատների աճումը:

Կազմել կոլեկցիա զանազան բույսերի և ցողունների: Կազմել ցուցակ ծանոթ խոտաբույսերի, թփերի, ծառերի, մազլցող, փաթաթվող բույսերի: Ծառանմանների բնի և նրա մասերի կոլեկցիա: Զանազան փայտերի գործադրման արձանագրումն:

Տերևների կոլեկցիա: Միկրոսկոպի տակ տերևի ուսումնասիրությունը: Գոլորշիացման քանակը որվա զանազան ժամերին. վորքան ջուր է գոլորշիացնում վոր և ե բույս, եթե կան տվյալներ դրա համար:



Ծաղիկ. — Նրա կազմութիւնը և ձևերը: Փոշոտման նշանակութիւնը և ձևերը: Միասեռ և յերկսեռ ծաղիկներ: Ծաղկավոր և սպորավոր բույսեր:

Փորձ արհեստական փոշոտման: Ծանոթանալ մեղվի փոշոտման ապարատին: Կոլլեկցիա ծաղիկների և դրանց փոշոտող միջատների: Սպորավոր բույսերի սունկեր, ջրի մուռեր, մամուռ, պտեր:

Կազմել հավաքածու ուտելի սունկերի: Դիտել նրանց սպորանոթները: Դիտել խմորի, շաքարաջրի խմորումը: Միկրոսկոպի տակ դիտել խմորման սունկերը, բորբոսը:

Յեթե դպրոցն ունի հողամաս կամ փորձադաշտ, ուսումնասիրել հետևյալ նյութերը:

- 1) Բույսը և հողը (պարարտացրած և անպարարտ մարզերը):
- 2) Բույսը և լույս (բույսերի նոսրացումը, ստվերի տակ յեղող մարզերը):
- 3) Բույսը և խոնավութիւն (անջրտի և ջրովի):
- 4) Տեղական գյուղատնտեսական բույսերը (բուսաբանական այգի):

### Ք Ի Մ Ի Ա

Քիմիայից առանձին դասընթաց չէ լինելու:

Նա պետք է միացած լինի ֆիզիկայի և բնագիտութեան հետ և գործնական կերպով տեղեկութիւն արվի հետևյալ խնդիրների մասին:

Ծանոթութիւն մի քանի մետաղների, նրանց փոփոխութիւնը խոնավ ոգում և շեկացման միջոցին:

Ծանոթութիւն ողի և ջրի բաղկացուցիչ մասերի (թթվածին, ազոտ, ջրածին):

Ծանոթութիւն ծծումբի, կալժքարի, ֆոսֆորի և ածխածնի և նրանց պարզ միացումների մասին:

Այրումն և մոմի նյութը: Շնչառութիւն: Որգանական այրվող նյութերի կազմը:

Դիտել տալ որգանական նյութերի մեջ ածխածնի (углерод), ճարպային և սպիտակուցային մասերի գոյութիւնը:

Քիմիական ելեմենտ և քիմիական միութիւն:

Քիմիական փոփոխութիւնների տեսակները:

### Ֆ Ի Ջ Ի Կ Ա

Տարրական մեքենագիտութիւն. — Համաչափ շարժում: Ուշտեր (մկանային, ծանրութեան, ճնշման, շփման և այլն): Լծակ: Շարժիչ ուշտեր (ջուր, քամի, կենդանի շարժիչներ): Մեքենաների կարողութիւնը: Ջիւլ ուշտ: Մարմինների հաշվաւորակշռութեան պայմանները: Պարզ մեքենաներ և նրանց ոգտագործման ձևերը:

Լույսի մասին. — Գաղափար արեգակնային ենեղիայի մասին: Շիկացած մարմինների լուսելը: Արեգակի ճառագայթումը: Ճառագայթների կլանումը բույսերի կողմից: Լույսի և ջերմային ճառագայթների նշանակութիւնը բուսականութեան համար: Արեգակնային լույսի տարրալուծումը պրիզմայի միջոցով: Մարմինների գույները:

Մագնիս. — Գաղափար մագնիսական ուշտի մասին: Բնական և արհեստական մագնիսներ: Մագնիսի բևեռներ: Ուժային գծեր: Յերկրի մագնիսականութիւն: Կողմնացույց:

Ելեքտրականութիւն. — Ելեքտրական ուշտի առաջանալը շփման միջոցով: Դրական և բացասական ելեքտրականութեան փոխազդեցութիւնները: Կալժ.

Դիտել լծակի գործածութիւնը գյուղատնտեսական և այլն աշխատանքների ժամանակ:

Դիտել ձիու և մեքենաների ուշտերի տարբերութիւնը աշխատելու ժամանակ: Դիտել ճախարակների, վոլորանների, պըտուտակների, անիվների և դոմկրատների գործադրութիւնները:

Դիտել արեգակի տաքութեան աստիճանը դաշտում, անտառում և լճակների կամ ծովի վրա: Դիտել դարբնոցում շիկացած յերկաթի լուսելը: Արեգակի լույսը տարրալուծել պրիզմայի միջոցով: Ձանազան գույներ ստանալը (բենզալյան կրակ և այլն): Դիտել արեգակին և արե մայր մտնելու ժամանակ հորիզոնի գույները: Տերևների գունավորումը: Խառնուկի տաքութեան տարածումը:

Ձանազան տեսակների մագնիսները դիտել և նրանց ուշտերը փորձել: Պատրաստել արհեստական մագնիսներ: Պատրաստել կողմնացույց:

Շփումներով առաջ բերել ելեքտրական ուշտ: Եքսկուրսիա գեպի հեռագրատուն: Ելեքտրական մեքենայով ստանալ կալժ և ճալթիւն:



կայծակ, վորոտ, շանթարգել,  
Ելեքորական ալիքներ: Ռադիո  
հեռագիր: Ելեքորական հոսանք,  
Ելեքորական հոսանքի ազդեցու-  
թյունը մարդու մարմնի վրա:  
Ելեքորական լույս, Ելեքորու-  
կան զանգ: Հեռագիր:

Մարդ յեվ կենդանի. — Ամփոփել և սխտեմի վերածել կենդա-  
նաբանությունից նախորդ տարիներում անցած նյութերը:

Մարդակազմություն, բնա-  
խոսություն յեվ առողջապա-  
րյուն. — Մարդու մարմնի կազմ-  
վածքը՝ կմախփ:

Մկաններ:

Մարտություն գործարան-  
ներ:

Շնչառություն:

Արյուն յեվ արյան օրգանա-  
ռություն:

Դիտել ելեքորոկայան:

Ծանոթանալ վոսկորների  
կազմության հետ:

Մկանների զարգանալը աշ-  
խատանքի ժամանակ:

Մանդանյութերը այրվող մար-  
միններ են (միս, հաց, մրգե-  
ղեն և այլն): Զրի, սպիտակուց-  
ների, շաքարի, յուղի և այլ  
հանքային նյութերի քանակը  
մանդանյութերի մեջ:

Մարդու շնչառությունը հան-  
գիստ ժամանակ, աշխատելիս,  
վաղելիս, վերելքի ժամանակ:

Թոքերի կազմությունը ղի-  
տել, Թոքային հիվանդություն-  
ներ և բժշկությունը: Բնակա-  
րանների և աշխատանոցների  
ողառատության անհրաժեշտու-  
թյունը:

Դիտել կենդանու սիրտը, նրա  
բաժանմունքները: Արյան կազ-  
մությունը: Արյունատար ա-  
նոթներ:

Ուղեղ յեվ ջղային համա-  
կարգություն:

Զգայարաններ:

Դիտել գլխի ուղեղի և վոդն-  
ուղեղի կազմությունը: Ուղեղի  
հիվանդություն: Քրոն ու հան-  
գիստ: Մտավոր հոգնածություն:

Վոչխարի աչքի անդամա-  
տումը: Միջին ախանջի վոսկոր-  
ները վոչխարի գանգում: Աչքի,  
ախանջի, քթի պահպանումը և  
խնամքը:

Հասարակական և անհատա-  
կան առողջապահություն: Առող-  
ջապահական որենքներ:



## ՄԱՏԵՄԱՏԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

Տասնորդական կոտորակներ. — Տասնորդական կոտորակների չորս գործողությունները Անվանական թվերի արտայայտություններ տասնորդական կոտորակներով, Տասնորդական կոտորակները դարձնել հասարակ կոտորակ և հակադարձ:

Տասնորդական և հասարակ կոտորակներով խնդիրներ, վորոնց նյութը լինի ազգաբնակչության թիվը, խտությունը, պարտադմունքները, հիվանդությունները, գրագիտությունը, բերքը, արտադրությունը, հարկերը, հողի քանակը և այլն:

Վիճակագրական տարրական հաշիվներ և ձևեր, որինակ՝ բնատանիքի, տնտեսական-արդյունաբերական ուսումնասիրության, արդյունքների հաշվառման, կոոպերացիա, նախահաշիվ կազմելը և այլն:

Ծանոթություն տնտեսական, առողջապահական, կլիմայական և այլն վիճակագրական ուղղությունների, դիագրամների և գրաֆիկներին:

Միջին թվաբանական թիվ, Հարաբերություններ, Տարբերական և քանորդական հարաբերություններ: Տոկոս և տոկոսային հարաբերություն: Հիմնական խնդիրներ տոկոսներով:

Նախնական գաղափար մեծությունների ֆունկցիոնալ կապակցություն մասին, գումարի, տարբերության արտադրյալի և քանորդի փոփոխությունները:

Համեմատություններ, Ուղիղ և հակադարձ համեմատական մեծություններ, Աղյուսակներ, դիագրամներ և գրաֆիկներ:

Հիմնական խնդիրներ համեմատական մեծությունների վերաբերյալ:

Համեմատական բաժանում:

Յեկրաչափություն — կրկնություն զննական յերկրաչափության (գործնականի համար կարևոր կետերի):

Հողաչափական և գծագրական գործիքներ և աշխատանքներ: Յեկրաչափական մարմին, մակերևույթ, գիծ և կետ: Յեկրաչափական պատկեր կամ ձև:

Գծերի և մակերևույթների փոխադարձ դրությունը (փոխադարձաբար իրար ուղղահայաց, գուգահեռ և թեքված լինելը):

Ուղիղ հատվածների համեմատումը և յերկարության չափումը: Յեկու կետերի հեռավորությունը: Ուղիղ հատվածների գումարումը և հանումը: Կցում և վերագրում:

Անկյուն, նրա տարրերը, անկյունների համեմատությունը և մեծությունը: Անկյունների չափելը (տարածությունների վրա եկկերի միջոցով): Անկյունների մի քանի հասկությունները (կից, ուղղահայաց և այլն): Ուղիղ անկյունների հավասարությունը վորպես անկյունաչափ:

Հասկացողություն կոորդինատների մասին գծերի, մակարդակի և տարածության վրա:

Անկյունաչափ, նրա պատրաստելը և գործադրությունը: Բուլթ և սուր անկյուններ: Կից անկյունների գումարումը, հակադիր անկյունների հավասարությունը: Ուղիղի վրա մի կետի շուրջը դանվող անկյունների գումարը: Բուրգ (ծանոթություն):

Յեռանկյուններ: Յեռանկյունու գլխավոր տարրերը: Յեռանկյունների տեսակները ըստ կողմերի և անկյունների: Յեռանկյունների հավասարության հատկանիշները: Յեռանկյան կողմերի հատկությունները, յեռանկյան բարձրություններ տանելը:

Շրջանագիծ, աղեղային աստիճան: Անկյունաչափ և նրա կազմությունը: Կենտրոնական անկյուններ: Անկյունների աստիճան: Անկյունների չափելը անկյունաչափով, Կարկին, կառուցման հիմնական խնդիրներ: Շրջանագծի յերկարությունը և շրջանի ու հատվածի մակարդակը:

Պրակտիկ բնավորություն ունեցող խնդիրներ՝ նյութը վերցրած առորյա կյանքից (հողամասերի չափումը, դիագրամներ կազմելը):

Հատկագիծ գծագրելը, մասշտաբ վորոշել տվյալ հատակագծի մակարդակն ու սահմանները (հողամասերի չափելը, մասերի բաժանելը գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ): Շրջանի մակարդակ գտնելը:

Գլանի և բուրգի մակարդակի և ծավալի վորոշելը: Գնդի մակարդակի և ծավալի վորոշելը:

Հանրահալիվ. — Ամբողջ և կոտորակային թվեր, Բացասական թվեր և 0: Չորս գործողություններ դրական և բացասական թվերով:



Տոների գործածությունը: Հանրահաշվական արտահայտությունները և նրա թվական արժեքը: Ընդհանուր ֆորմուլաներ: Հանրահաշվական նշաններ և գործողությունների կարգը: Գործակից, աստիճանացույց, արժատ: Գրել և կարդալ հանրահաշվական արտահայտություններ և ֆորմուլաներ:

Պարզ հավասարումներ:

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Խորհրդային միություն. — Խորհ. Միության սահմանները, յերկրի աշխարհագրական դիրքը, մեծությունը, բնակիչների թիվը:

Խոր. Միության բաղկացուցիչ մասերը՝ 1) Անդրկովկասյան ֆեդերացիան, 2) Ռ. Խ. Ս. Հանրապետություն: 3) Բելորուսիա, 4) Ուկրաինա և 5) Ուզբեկստանի Խոր. Հանրապետություն:

Անդրկովկաս. — Նրա սահմանները, յերկրի կազմությունը, կլիման, ջրերը, բուսականությունը:

Անդրկովկասյան ֆեդերացիան, նրա ծագումը և նշանակությունը յերկրի բնակիչների համար:

Ֆեդերացիայի մեջ մտնող յերկրները — Ադրբեջան, Վրաստան և Հայաստան: Այդ յերկրների դիրքը և տնտեսական հարաբերությունները Խոր. Միության այլ մասերի և դրսի յերկրների հետ: Այդ յերկրների իրար հետ ունեցած տնտեսական և քաղաքական կյանքի սերտ կապը: Բնակիչների գլխավոր զբաղմունքները, կուլտուրական կյանքը, կենցաղը, սովորություններն ու առանձնահատկությունները:

Ռուսաստանի Խոր. Սոց. Հանրապետություն. — Յերկիրը, մեծությունը և բաղկացուցիչ գլխավոր մասերը:

Հյուսիսային Կովկաս. — Յերկիրը, լեռնային և դաշտային շրջանները: Կովկասյան գլխավոր լեռնաշղթան, նրա մասերը, կլիման, բուսականությունը, կենդանիները: Լեռնական ժողովուրդները, նրանց պարապմունքները, կենցաղը, լեռնականների ավտոնոմ հանրապետությունները (Դաղստանը, Լեռնակ. Ավտոնոմ Խորհրդ. Հանրապետությունը) և նրանց կենտրոնները:

Հյուսիսային Կովկասի հարթությունները (Կուբանի, Ստավրոպոլի, Թերեկի) բնական հարստությունները և պաղպաղեցությունը: Բնակիչները, նրանց պարապմունքները և սովորությունները:

Ղրիմի հանրապետություն. — Ղրիմի թերակղզին. կլիման, բնակիչները և նրանց գլխավոր պարապմունքները:

Հարավ-ռուսական սախասաններ. — Սեվաստոպոլի. — Սահմանները, բնությունը և բնակիչների պարապմունքը: Այս



շրջանը վորպես հացի շտեմարան ամբողջ խորհ. Միության համար: Գլխավոր կենտրոնները:

Կենտրոնական արդյունաբերական շրջան.—Այս շրջանի կլիման, ջրերը և անտառները: Արդյունաբերական գլխավոր կենտրոնները: Բնակիչների զբաղմունքները:

Հյուսիսային տնտեսական շրջան.— Բնության տեսարանները և առանձնահատկությունները այս շրջանում: Բնակիչների կենցաղը և պարագմունքները:

Ուրալ.— Բնություն, լեռնային արդյունաբերություն, ազգաբնակչության պարագմունքները:

Սիբիր.— Արևմտյան և Արևելյան Սիբիրի սահմանները, տարածությունը և յերկրի դիրքը: Այդ շրջանները առանձնահատուկ պայմանները, յերկրի բնական հարստությունները:

Հեռավոր արևելքի խ. Հանրապետությունը:

Ուկրաինայի խոր. Ս. Հարավարևելք.— Սահմանները, յերկրի դիրքը և կազմությունը: Գետերը: Ազգաբնակչությունը և գլխավոր պարագմունքները: Յերկրագործությունը և արդյունաբերությունը Ուկրաինայում:

Բելոռուսիայի խ. Հանրապետությունը.— Յերկրը, սահմանները, բնակիչների կյանքն ու պարագմունքները:

Ուզբեկստանի յեվ Թուրքեստանի խ. Ս. Հանրապետությունը.—

Այդ շրջանի անապատները, կյանքը ու ավազաններում, բնակիչների զբաղմունքները, կենցաղն ու սովորությունները: Թուրքեստանի նշանակությունը խոր. Միության համար:

Բուխարայի յեվ Սուրհանդի հանրապետությունները.— Սահմանները և բնակիչների զբաղմունքները:

Ընդհանուր ակնարկ խոր. Միության վրա

Համառոտ գիտելիքներ Ասիայի, Յեվրոպայի, Աֆրիկայի և Ամերիկայի գլխավոր ժողովուրդների մասին: Կուլտուրական և վ. հ կուլտուրական ժողովուրդներ: Համաշխարհային տնտեսության և առևտրի մասին տեղեկություններ (տարրական): Առևտրական ճանապարհներ: Կապիտալիստական մեծ պետությունները: Պայքար այդ պետությունների մեջ շուկաները գրավելու համար: Ժողովուրդների համաշխարհային դաշնակցությունն ապագայում:

## ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ

ՍՈՒ ԶԻՆ ԽՍԲԱԿՈՒՄ

Մանկական լեզվով իրենց տպավորություններն արտահայտելը: Պատմել զանազան պատկերների բովանդակությունը: Անգիր սովորել վոտանավորներ և յերգեր: Ուսուցչի կողմից և իր լսածի վերապատմելը և դրամատիզացիա:

Գրագիտություն.— Վարժ, գիտս կից ընթերցանություն փոքրիկ հոգվածների, պլակատների: Ազատ ընթերցանություն գեղարվեստական և գործնական (պարզ դիմում, նամակ և այլն) մատչելի նյութերի:

Պլակատների կողեկտիվ գրություն. կազմել պարզ հայտարարություններ դասարանի երգի և հերթապահների ցուցակներ: Մշակել համառոտ նախադասություններով շարադրություններ (ոգտադրծելով նկարներ և ոգտվելով անցած նյութերից): Կազմել փոքրիկ, ինքնուրույն գրություններ:

Ուղղագրական տարրական կանոններ. գլխագրերի գործածություն. վ. նկեր և տողագրադ: Կետեր:

ՅԵՐԿՐՈՒ Դ ԽՍԲ ԿՈՒՄ

Սեփական ապրումների, դիտողությունների բանավոր արտահայտելը: Պատմել կարգացածը և դիտած նկարները: Կողեկտիվ պատմվածք, դիալոգ. կարգացածի, լսածի, դրամատիզացիա և ինսցենիրովկա: Զրույց կարգացածի և լսածի շուրջը: Յերգեր, վոտանավորներ:

Գիտակից և արտահայտիչ ընթերցանություն: Զեռագրի ազատ և սահուն ընթերցումն աեառից և գրատախտակից: Գրքույկների ընթերցումն դասարանում, իսկ տարվա վերջը նաև տանը. վոտանավորներ անգիր անելը:

Դասարանի կյանքի, բնության դիտողությունների համառոտ որագիր: Որացույց, պարզ ցուցակներ, տախտակներ, նամակագրություն առաջադրած խնդիրների շուրջը: Ալբոմներ— ընտրովի նյութերի համար: Կողեկցիաների անվանելը: Հասցեներ, դիմումներ՝ ընդհանուր ձևերով: Կապակից գրություն. գրության մշակում:



Առարկա, գործողություն, հատկություն, թիվ: Գրություն և արտասանության անհամապատասխան դեպքեր (Ախչիկ-աղջիկ, վարթ—վարդ):

Տողադարձի պարզ կանոններ: Առոգանության նշաններ — շեշտ, հարցական, բացականչական:

### ՅԵՐՐՈՐԴ ԽՄԲԱԿՈՒՄ

Ընթերցանություն. — Ընթերցանության մեխանիզմը զարգացնելու համար կարգավ դասագրքից կամ այլ գրվածքներից ընտիր, գեղարվեստական հոգվածներ և վոտանավորներ. վերջիններից ընտիր կտորներն անգիր արտասանել, բեմադրել՝ (դրամատիկացիայի յենթարկել) կատարելագործելու համար գիտակից և արտահայտիչ ընթերցանությունը:

Հատուկ ուշադրություն դարձնել առոգանության և տրոհության նշանների, տրամաբանական շեշտի, ութմի և ինտոնացիայի վրա:

Խոսելու և պատմելու կարողությունը մշակելու համար պատմել տալ կյանքում ապրած, պատահած դեպքերը, նկարագրել բնության գեղեցիկ տեսարանները, հասարակական և կենդանական կյանքի վերաբերյալ գրվածքներ և այլն: Գեղարվեստական ընտիր հատվածների, վոտանավորների և լրագրական հոգվածների բանավոր վերարտադրություն՝ անփոփոխ և փոփոխված ձևերով (դեմքը, ժամանակը փոփոխելով, համառոտ և ընդարձակ):

Պատմել կատարած եքսկուրսիաների և դիտած նկարների մասին. գեկույցներ տալ դպրոցական կամ այժմեյական կյանքի այլ խնդիրների մասին:

Հաշվետվություն իր կատարած աշխատանքների մասին:

Գրավոր. — Ինքնուրույն և կոլլեկտիվ շարագրություններ. դիմում, նամակ, գործնական գրություններ: Շարագրություն պատկերներով, եքսկուրսիաների նկարագրություն. կարգացածի վերարտադրություն. որացույց և որագիր կազմել: Վիճակագրություն, ժողովի արձանագրություն, գեկուցում և այլն:

Քերականություն. — Պարզ նախադասության ընթերցումը մտքի շեշտի, ինտոնացիայի տեսակետով. նախադասության անդամների դիրքը և փոխհարաբերությունները: Պարզ, բարդ և ածանցական բառեր: Ածանց և արմատ, կապ: Նույնանիշ և համանուն բառեր: Հոլովում և խոնարհում (գլխավորները)՝ նախադասություններով և հարցերով: Զայնավոր և բաղաձայն տառեր: Համահնչուն բաղաձայն տա-

ռեր. «ը» տառի հնչունը և գործադրությունը: Շրթնային, լեզվային, սուլող և այլ բաղաձայններ: Հնչունների սղումը և փոփոխությունը շեշտի ազդեցության տակ:

### ՉՈՐՐՈՐԴ ԽՄԲԱԿՈՒՄ

Ընթերցանություն. — Այս խմբակում պիտի զարգացնել գիտակից ընթերցանության մեխանիզմը, հատուկ ուշադրության առարկա դարձնելով սահուն, իմաստալից և առոգանությամբ կարգավ:

Ինտոնացիայի, ութմի, տրամաբանական շեշտի, տրոհության ու առոգանության նշանների գիտակից գործադրությունը կարգալիս:

Ընտիր վոտանավորների, գեղարվեստական արձակ գրվածքների, ինչպես նաև թատերական գրվածքներից անգիր արտասանություն, բեմադրություն (դրամատիկացիա): Այստեղ նյութ պիտի ծառայեն և աշակերտների ինքնուրույն գրվածքները:

Կարգացածի վերարտադրություն բոլոր ձևերով (առաջին կամ յերրորդ գեմքով, ներկա կամ անցյալ ժամանակով, համառոտ կամ ընդարձակ, թեզիսներով և այլն):

Նկարագրություն եքսկուրսիաների, պատկերների, դեպքերի, յերեկույթ-ցերեկույթների, տեսարանների և այլն:

Պաշտպանական, մեղադրական և այլ դեպքերի առիթով խոսք:

Գրական յերկերի գեղարվեստական արժեքի պարզաբանություն, կարգացած հոգվածների գլխավոր գործիչ անձերի վարքի և բնավորության պարզաբանություն, հասարակական-բարոյական դադափարների գործողությունների գնահատում:

Գրավոր. — Գրավորներն ամբողջապես ինքնուրույն աշխատանքներ պիտի լինեն. նամակներ, գրագրություններ մոտիկ և հեռավոր վայրերի հետ. դպրոցական գրագրություն. թղթերի զրանցում համառոտ բովանդակությամբ. դիմումներ, ստացագրեր, ժողովների արձանագրություններ, հաշվետվություն, պատի լրագրի խմբագրություն, թղթակցություն և այլ գրական ժողովածուներ:

Քերականություն. — Բարդ նախադասությունների գննու-



թյուն. նախադասության անդամների դիրքը և նրանց կապը. տրամաբանական շեշտ և ռիթմ. խոսքի անդամները (առանց տեղմիների), դրական, բացասական անդամ նախադասություն: Համառոտ, ընդարձակ նախադասություն:

Բառակազմություն: Գոյականների թիվը, հոլովները, Ածականներ: Բայերի խոնարհումը (3 ժամանակներով): Գերանուն կապեր: Ածանց և բարդ բառեր: Հնչուններ, ձայնավորներ, բաղաձայն, յերկբարբառ: Շեշտի ազդեցությունը: Տառերի սղումը, փոփոխումն: Այս բոլորի նյութը պիտի կազմեն կոմպլեքսից բղխող նյութերը:

## ՄԱՏԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ

ՍՈՒՋԻՆ ԽՍԲ Կ Ի Ս

Գործողություններ առաջին յերկու տասնյակների սահմանում: Բոլոր գործողությունները տասնյակներով մինչև 100. կես և քառորդ մասեր: Յերկարության և ծանրության չափեր: Ժամացույցի ծանոթություն: Քառակուսի, ուղղանկյուն, յեռանկյուն, շրջան:

ՅԵ՛ՐՈՐԴ ԽՍԲ ԿՈՒՍ

Թվարկություն և չորս գործողությունները 100-ի շրջանում: Որացույցի ծանոթություն: Որերի քանակը ըստ ամիսների, Շաբաթվա օրերը. օր ու գիշեր, ժամ, րոպե, վայրկյան. Ժամացույց և ջերմաչափ: Ծանոթություն յերկարության և հեղուկի չափերի: Գաղափար մակերեսի և ծավալի մասին:

Քառակուսի, ուղղանկյուն և խորանարդ:

Պարզ դիագրամներ և հատակագծեր կազմելը:

ՅԵ՛ՐՈՐԴ ԽՍԲ ԿՈՒՍ

Բանավոր և գրավոր վարժություններ (թվարկություն) բազմանիշ թվերով, Դասեր (միավորներ, հազարավորներ, միլիոնավորներ և այլն) և կարգեր (միավորներ, տասնավորներ, հարյուրավորներ): Բազմանիշ թվերով օրինակներ և նրանց պատկերացումը դիագրամների ձևով: Գումարման և հանման վերաբերյալ խնդիրներ բազմանիշ թվերով: Գումարման և հանման վերաբերյալ վարժություններ համընթիվ Վրա Այս գործողությունների ստուգումը:

Բազմանիշ թվերի բազմապատկումն ու բաժանումը միանիշ, յերկանիշ և բազմանիշ թվերով: Արտադրյալի և քանորդի փոփոխություն, յերբ փոփոխվում և գործողության ելեմենտներից մեկը: Բազմապատկումն ու բաժանումը հեշտ ձևերով: Վարժություններ 5, 25, 125, 6, 12 և այլն թվերով: Բազմապատկման և բաժանման ստուգումը:

Պատրաստել տալ ռուսական և մետրական սխտեմի յերկա-



ության չափերի մոդելները: Վարժեցնել չափելու առարկաների յայնությունը, յերկարությունը և բարձրությունը: Նմանապես և հեղուկների ու ընդեղենների չափելը:—Համեմատություն տեղական գործածական չափերի (խավար, բեռ, լիտր և այլն):

Պարզ և բարդ անվանական թվեր: Խնդիրներ և վարժություններ անվանական թվերի վերաբերյալ չորս գործողություններով:

Հասկացողություն տոկոսների մասին: Տոկոսների ոգնությամբ կազմել դիագրամներ դպրոցի, դասարանական կազմի և աշակերտների հառաջադիմության մասին:

Կոտորակների մասին ավելի ընդարձակ գաղափար, յերկրորդ խմբակի համեմատությամբ: Գտնել թվի մասերը: Գտնել ամբողջը, յերբ հայտնի են նրա մասերը:

Յերկարչափությունից.—Ծանոթացնել խորանարդի, պրիզմայի և բուլբի հետ: Այդ մարմինների կողերը, նիստերը, անկյունները և գագաթները: Հորիզոնական և ուղղահայաց մակարդակներ: Հարթչափի և կապարալարի գործադրությունը:

Շրջան. շրջագիծ, կենտրոն, շառավիղ և տրամագիծ: Հասկացողություն գնդի մասին: Բևեռներ, առանցք, հասարակած և միջորեյական:

Ուղիղ գիծ և կետ. բեկված և կոր գծեր: Այդ գծերի չափելը: Վառժեցնել քանոնի և կարկինի գործադրության հետ: Ուղիղ գծերի չափելը և գործողություններ դրանց վերաբերյալ: Միմիանց հատող գծեր:

Անկյուններ: Անկյունների տեսակները.—ուղիղ, սուր և բութ: Անկյունների մեծության համեմատությունը, Հասկացողություն եկկերի մասին:

Զուգահեռ գծեր:

## ՉՈՐՐՈՐԴ ԽՄԲԱՎՈՒՄ

Կոտորակներ: Գաղափար կոտորակի մասին, իբրև միավորի (1-ի) մի քանի հավասար մասերի ( $\frac{3}{4}$ —մի առարկան բաժանված է 4 մասերի և այդ մասերից վերցված է 3-ը) կամ իբրև քանորդի, վոր ստացվում է մի թիվը մյուսի վրա բաժանելուց ( $2:3=\frac{2}{3}$  և այլն):

Անվանական թիվն արտահայտել կոտորակով (որինակ 3 վերջուկը= $\frac{3}{16}$  արշինի, 2 արշինը= $\frac{2}{3}$  սաժենի, 6 գրվ.= $\frac{6}{40}$  փթի):

Կոտորակների համեմատությունը (կանոնավոր և անկանոն կոտորակներ, միևնույն համարիչ կամ հայտարար ունեցող կոտորակներ, համեմատել կոտորակը ամբողջի հետ—վորքանով է մեծ կամ փոքր):

Անկանոն կոտորակից ստանալ խառը թիվ և հակառակը: Գումարել և հանել միանման հայտարար ունեցող կոտորակները: Փոքրացնել, մեծացնել կոտորակը մի քանի անգամ փոփոխելով համարիչը, նույնը անել փոփոխելով հայտարարը: Կոտորակի կրճատումն:

Անմասցորդ բաժանման նշանացույցերը 2, 4, 5, 25, 3, 9, 6 վրա: Վերլուծել թիվը պարզ բաժանարարների: Ամենափոքր բազմապատիկ թիվը: Կոտորակները բերել մի հայտարարի: Տարբեր հայտարարներով կոտորակների գումարումն և հանումն: Խնդիրներ:

Կոտորակների բազմապատկումն և բաժանումն: Խնդիրներ:

Խնդիրներ վորտեղ գործողության տարրերից մեկն անհայտ է (x):

Յերկարչափությունից.—Խորանարդ. պրիզմա:

Հարթ մակերևույթ (հարթություն): Գլան և կոն: Կոր մակերևույթներ: Այդ մարմինների հիմքը և բարձրությունը: Շրջան, շրջագիծ, կենտրոն, շառավիղ, տրամագիծ, լար, հատող (сечущая), շոշափող (касательная), հատած (сектор), հատված (сегмент):

Շրջագիծը և շրջանը բաժանել 2, 4, 8, 6, 3, 12 հավասար մասերի: Շրջագծի յերկարությունը (տրամագծից 3,14 անգամ ավել): Շրջագծի չափելը—աստիճան, ըոպե, վայրկյան:

Գունդ, մեծ շրջագիծ, կենտրոն, բևեռներ, միջորեյական, զուգահեռականներ (աշխարհագրական հասկացողություններ):

Քառանկյունի և քառակուսի: Կողմերը և անկյունները: Այդ մարմինների բարձրությունը և հիմքը: Քառակուսի չափեր: Պատրաստել քառակուսի չափերի մոդելներ աշակերտների միջոցով: Ուղղանկյան և քառակուսու մակերեսի չափելը (գործնականապես):



Հաշվել ուղղանկյան և քառակուսու մակերեսը:

Ուղղանկյան և քառակուսու մակերեսի ֆորմուլան (քառակուսի  $5 \times 5 = 5^2 = 25$  քառ. արշ.): Իրական կյանքին համապատասխանող խնդիրների լուծումն:

Պրիզմայի բացելը և նրա մակերեսների հաշվելը:

Պատրաստել աշակերտների միջոցով խորանարդ չափեր: Չափել (գործնականապես) պրիզմայի և խորանարդի ծավալը:

Հաշվել պրիզմայի և խորանարդի ծավալը:

Պրիզմայի և խորանարդի ծավալի ֆորմուլան: (Խորանարդ  $6 \times 6 \times 6 = 6^3 = 216$  խոր. մետր):

Ծավալի վերաբերյալ խնդիրներ՝ վերցրած իրական կյանքից:

Դիագրամների կազմելն ու կարդալը:

Գրաֆիկ զծավոր արտահայտություն (КРИВЫЕ) թվական տվյալների բարեխառնության փոփոխություն, համաճարակի, հանքերի ստացման, գալոցը հաճախելու և այլն:

## ՀԱՍՏԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ \*)

ՉՈՐՐՈՐԴ ԽՍԲԱՎՈՒՄ

ՄԵՐ ՔԱՂԱՔԸ

Ազգաբնակչության կազմը: Դասակարգային բաժանում: Պրոֆմիություն: Աշխատանքի պաշտպանություն: Սոցիալական ապահովություն: Տեղիումներ և Աղբ. պրոֆմիություններ: Խորհուրդ: Բան. գործարանային կոմիտեներ:

Մեր կուլտ-կրթական հաստատությունները և լուսավորությունը որդանները - մանկապարտեզներ, դպրոցներ, մանկատներ, լիկկայաններ, ակումբներ, գրադարաններ, թատրոններ, թանկարաններ, բանֆակներ և բարձրագույն դպրոցներ: ԲՈՆՈՆ և նրա բաժանմունքները:

Մեր քաղաքի տնտեսությունը. քաղաքի բարեկարգությունը. բնակարանային տնտեսությունը. ջրի մատակարարումն. էլեկտրաքարշ. քաղաքային արդյունաբերությունը. կոմունալ տնտեսություն և նրա բաժանմունքները:

Ժողովրդական առողջապահության պաշտպանություն: Բուժարաններ, հիվանդություններ, դեղատներ, անասնաբուժական կայաններ:

Քաղաքի առողջապահական բաժնի ախտահանական կայան և նրա բաժանմունքները:

Քաղաքի իրրև վարչական կենտրոն. քաղաքային խորհուրդ. գործկոմ և նրա բաժանմունքները:

Շրջանային խորհուրդներ. խորհրդի ընտրությունը և կազմը: Մեր խորհրդի գործունեությունը. միլիցիա. ինչպես և կառավարվել քաղաքը մինչև հեղափոխությունը:

Քաղաքի իրրև արդյունաբերական կենտրոն. տեղական գործարաններ և ֆաբրիկաներ. մեր քաղաքի գլխավոր արտադրությունը:

Բանվորների քանակը և նրանց թվական բաժանումը ըստ արտադրության: Ո՞ւմ են պատկանում մեր գործարանները և ֆաբրիկաները: Ո՞ւմ են պատկանում նրանք առաջ: Բազմի բանվորների կոնվը նավթարդյունաբերող կապիտալիստների ղեմ մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը: Այդ կովի եպիգոնները: Բանվորական ուր, բնակարանային խնդիրը և աշխատանքի այլ պայմաններն անցյալում և այժմ: Բանվորական

\*) Մանրություն. — IV խմբակի բնագիտության և հասարակագիտության առարկայական ծրագրերը հավելվածի ձևով տրվում են ուսուցչության ցանկության համաձայն:



հանրակացարանների կառուցումը:

Քաղաքը վարպես առևտրի կենտրոն. մյուս քաղաքների հետ ունեցած կապը. ներմուծում և արտահանում: Ճանապարհների հաղորդակցություն. նավահանգիստ և նրա նշանակությունը. յերկաթուղային կայարան: Գավառի հետ ունեցած կապը. առևտուրը Պարսկաստանի հետ: Նավագնացություն. կասպյան նավագնացություն. մաքսատուն:

Մեր կազմակերպությունները. պատկոմներ. Ադր. Լեն. յերիտմիություն. Ադր. կոմիտե: Պատկոմների դերը դպրոցում: ՄՈՊԻ. Դոբրոխիմ և այլն:

Մեր կոոպերացիան. Բագսայուզը և նրա գործունեությունը: Գորնյակը և նրա գործունեությունը:

Մեր քաղաքի պատմությունը. մի քանի փողոցների, արուարձանների և հրապարակների պատմություններ: Մեր նավթային շրջանի պատմությունը. Հնության մնացորդները: Մեր քաղաքի հեղափոխական պատմությունը:

#### Գ Յ Ո Ւ Ղ Յ Ե Վ Ք Ա Ղ Ա Ք

Քաղաքը վարպես արդյունաբերության կենտրոն, գյուղը — գյուղական տնտեսության կենտրոն: Քաղաքի և գյուղի փոխհարաբերությունը և իրարից ունեցած կախումը:

Քաղաքի և գյուղի փոխանակության ձևը (շուկա, մասնավոր առևտուր, գյուղական խանութ, քաղաքի խանութ, կոոպերատիվներ): Գյուղի և քաղաքի ազգաբնակչության կյանքը զուգընթաց: Քաղաքի և գյուղի միջի ճանապարհների հաղորդակցությունը: Գյուղերի մեջ յեղած հաղորդակցության ճանապարհները:

Ազգաբնակչության կուլտուրան. Ուլմեն պատկանում հողերը գյուղում և ուլմեն եյին պատկանում մինչև հեղափոխությունը: Ադրբեջանի խաները և բեկերը, նրանց դերն անցյալում և հեղափոխության ընթացքում նրանց հետ սունեցած կռիվը:

Իշխանությունը գյուղում, գործկոմ և այլն: Գյուղական տնտեսություն. գյուղի արտադրական գործիքները: Հողի մշակման ձևերը: Այգեգործություն:

Գյուղական ընտանիքի տնային արդյունաբերությունը: Գյուղական արհեստավոր (դարբին, կոշիկար): Ֆաբրիկային արտադրությամբ տնային արդյունաբերության և արհեստի մշտումը: Ֆաբրիկային և արհեստավորների արդյունաբերու-

թյան համեմատությունը: Ինչ և անհրաժեշտ մեր գյուղի դրությունը բարձրացման համար: Ելեքարոֆիկացիայի նշանակությունը գյուղի համար: Գյուղական կրթական հիմնարկություններ (դպրոց ակումբ, խրճիթ-ընթերցարան):

Քաղաքային և գյուղական տնտեսություն. դրանց զուգընթաց գործունեությունը:

#### ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարդու նորագույն գյուտերը. արտադրական գործիքների փոփոխությունը և կատարելագործումը. ժամանակակից շարժիչներ (ելեքտրականություն, գոլորշի):

Շարժիչները հնում (մարդ, կենդանի, քամի, ջուր):

Կատարելագործված գործիքների ազդեցությունը հասարակական կյանքի արտադրության վրա (ներկայումս զանազան յերկրների կյանքի հետ զուգընթաց):

Մարդու կռիվը բնության հետ: Բնության ուժերի յենթարկվելը մարդուն. նախամարդու բնությունից ունեցած կախումը:

Նախամարդու գործիքները (փայտ, քար, բրնձ և յերկաթ): Կրակի գյուտը և նրա նշանակությունը մարդու կյանքի համար: Սեփականացվող տնտեսություններ (ձկնորսություն, վորսորդություն):

Կենդանիների ընտելացումը: Անասնապահություն: Նահապետական ցեղական կազմ: Յերկրագործության ծագումը և նրա զարգանալը: Աշխատանքի բաժանումը:

Տնտեսական ձևերի ազդեցությունը և փոփոխությունը հասարակական կյանքի նկատմամբ:

Հագուստների աստիճանական զարգացումը:

Մարդկային բնակարանի եվոլյուցիան (քարանձավից մինչև յերկնասլացները (небоскребы): Գյուղատնտեսական գործիքների եվոլյուցիան (փայտից մինչև մեքենաները):

Ինչպես եր անդրադառնում նախամարդու կյանքը նրա գիտակցության վրա:

Նախամարդու կրոնը. լեզվի զարգացումը:

Նախամարդու գեղարվեստը:

Մարդկային հասարակության կյանքի առաջին շրջանում ունեցած սեփականության մեջ յեղած եվոլյուցիան:

Տերեր և սարուկներ:

Հասարակության բաժանումը դասակարգերի:

Դասակարգային պայքարի պատմական եպիզոդները:



# Բ Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ՉՈՐՐԱԴ ԽՄԲԱԿ

### Ֆ Ի Զ Ի Կ Ա

**Բնություն.** — Բնական մարմիններ և նրանց յերեք վիճակը: Մարմինների հիմնական հատկությունները (տարածականություն, անանցանելիություն, ծանրություն): Ծանրության ուժի ուղղությունը, կապարալար, հարթաչափ: Գործնական չափումներ-յերկարություն, ծանրության, ծավալի, ժամանակի: Տեսակարար կըշիռ:

**Ջերմություն.** — Ջերմության աղբյուրները: Ջերմության տարածումը: Լավ և վատ հաղորդիչներ: Կիրառումն կյանքում: Մարմինների ընդարձակվելը ջերմությունից: Տաք հոսանքներ ջրի և ողի մեջ: Ջրի ծավալի փոփոխման առանձնահատկությունները տաքությունից: Այդ յերեույթի նշանակությունը: Մարմինների վիճակի փոփոխությունը տաքությունից: Ջերմաչափ և մշտական կետեր:

Սառույցը դարձնել հեղուկ և ապա գոլորշիացնել:

Մետրական և ուսուսական չափերի համեմատում: Ձանազան յերկարությունների չափելը՝ դասարանի, դպրոցական շենքի, բակի, փոքր հողամասի և այլն:

Ձանազան մարմինների մակերեսի և ծավալի փորձումները: Կշեռքների տեսակները: Կշեռքների մոդելներ պատրաստելը: Փայտեղենների, տեղական քարերի և այլ մարմինների տեսակարար կշիռ փորձելը:

Դիտել անիվների վրա ողակներ անցկացնելու գործողությունը: Դիտել հալեցման և յեռացման տաքության աստիճանները: Սառույցի հալման և գոլորշիացման պրոցեսը: Մետաղների, քարերի, փայտեղենների և հողի ջերմահաղորդականությունները: աստիճանները: «Տերմոս» պատրաստելը տաք և սառն ուտելիքներ և լամպիքներ պահելու համար:

Ուսումնասիրել տաքության

Ջրի գոլորշիացումն և յեռումն: Ջերմության աստիճանի իջնելը գոլորշիացումից: Ջրային գոլորշիները ոգում: Մթնոլորտային տեղումներ (ցուր, յեղրամ, անձրև, ձյուն, կարկուտ, ողի խոնավություն): Տաքություն և կյանք: Ջերմության փոխարկվելը ուրիշ տեսակի ենեղիայի: Արևն իբրև ջերմության աղբյուր:

**Հեղուկներ.** — Հեղուկների հատկությունները: Հողն իբրև զախ: Աղբյուրներ: Հաղորդակից անոթներ: Շատրվան: Արտեզյան ջրհորներ: Պասկալի և Արքիմեդի որենքները: Մարմինների լողալը ջրի մեջ: Շոգենափ, սուղանափ: Ջրաբաշխական մամուլ: Ջրի բաղադրիչ մասերը: Ջրածնի հատկությունները: Ջուր և կյանք: Ջուրը փորպես շարժիչ ուժ:

**Գազեր.** — Գազերի հատկությունները: Առաձկականություն: Մթնոլորտ և նրա ճնշումը: Շփումը գազերի մեջ: Ծանրաչափ. նրա կառուցվածքը և կիրառումը գազերի վերաբերյալ: Ջրմուղ և ջրհանմեքենաներ: Ոգահան և ոգամուտ մեքենաներ: Մարմինների լողալը ողի մեջ: Ոգապարիկ. սովառնակ: Գազերի տեսակարար կըշիռը: Ողի բաղադրիչ մասերը (թթվածին, բորակածին, ածխածին): Այդ տարրերի նշանակությունը կյանքի համար: Գազերի շրջանառությունը բնության մեջ:

Ծավալը պահպանելու միջոցները (բնակարանների տաքություն, լուսամուտների կրկնակի փեղկեր և այլն): Սառցարանների պահպանումը: Դիտել ջրի սառչելը և ծավալի լայնանալը: Չափել տարվա զանազան յեղանակներին առվակի, լճի, ջրհորի ջրերի տաքությունը:

Տեղական ջրամբների (լճերի, ծովի, ավազանների) մակերևույթների բարձրությունների համեմատությունը: Դիտել նավակի, լաստի լողալու պայմանները: Ջրի մեջ ընկղմվող առարկաների ծանրության պակասելը: Դիտել ջրի ուժով գործող մեքենաների աշխատանքները:

Դիտել սապոնի և անձրևի պղպջակներ, գորտերի և ձկների լողափամփուռները:

Դիտել քամու և փոթորիկի առաձգությունը բաց դաշտում և անտառում: Քամու ալրաղայները: Դիտել ոգապարիկների և այլըստանների թռիչքները:



## Կ Ե Ն Դ Ա Ն Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Մարդ և կենդանիներ: Կմախք, կմախքի նշանակությունը: Մկաններ, մկանների կազմությունը և նրանց նշանակությունը: Մենդառություն, շնչառություն, արյան շրջանառություն, ջրային համակարգություն, զգայարաններ:

Յուրաքանչյուր որդանը անցնելիս համապատասխան առողջապահական տարրական հասկացողություններ տալ:

Կաթնատուներ.—Շուն և կատու, վորպես ներկայացուցիչ գիշատիչ կենդանիների:

Ամբակավորներ.—Ձի, կով, վոշխար, այծ: Նրանց մարմնի կազմվածքը և խնամք:

Կրծողներ.—Մուկ և դաշտային մուկ: Նրանց կազմվածքի առանձնահատկությունները:

Թռչուններ.—Աղավնի, հավ, բադ և ճագրուկ. նրանց կազմվածքը, առանձնահատկությունները (թռչելու համար հարմարված): Թռչունների բազմաճյուղ:

Սողուններ.—Մողես, թունավոր և վոշ թունավոր ոձեր: Նրանց մարմնի կազմվածքը և աճումը:

Յերկկենցաղներ.—Գորտ և քամելիոն:

Ձկներ.—Նրանց բազմաճյուղ ու մարմնի կազմվածքը՝ հարմարեցրած ջրի մեջ ապրելու համար:

Միջատներ.—Մալիսյան բզեզ, մեղու, մրջյուն, շերամ, ճանձ, մորեխ, մոծակ, փայտոջիլ, վոշիլ և լու: Նրանց կազմվածքը, բազմաճյուղ. նրանց աչքերի կազմվածքը:

Միջատների արտաքին տարբերությունները և նրանց գունավորման պատճառները (վորպես ինքնապաշտպանության միջոց): Միջատների տված ոգուտներն ու վնասները: Պայքար վնասակար միջատների դեմ:

Միջատները վորպես հիվանդություններ տարածող: Միջատների հասարակական կյանքը: Մեղվաբուծություն և շերամապահություն:

Վորդեր.—Անձրեային ճիճու և յերիգորդ:

Կենդանիներն անցնելիս շնչել. ա) կազմվածքի առանձնահատկությունները կապված նրանց կենցաղի հետ, բ) տված ոգուտներն ու պատճառած վնասները, գ) ընտանի կենդանիների խնամքը, դ) պայքար վնասակար կենդանիների դեմ:

## ԿՈՄՊԼԵՔՍԱՅԻՆ ՌԻՍՈՒՑՈՒՄԸ ՅԵՎ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒՆ

Մայրենի լեզվի դերը.—Կոմպլեքսային ուսուցումը հիմնապես փոխում է մայրենի լեզվի դերը ուսուցման գիտելիքների շարքում: Մայրենի լեզուն այլևս գերակշռող կամ տիրապետող դեր չի կատարում, այլ ուսուցման բոլոր առարկաների հետ շաղկապված ծառայում է մի ընդհանուր նպատակի—աշակերտների մտավոր զարգացման, կրթության, նրանց մեջ կյանքը ուսումնասիրելու համար վորոշ աշխարհայացք ստեղծելու գործին: Անշուշտ՝ մայրենի լեզուն իբրև աշակերտի զգացումները, միտքը, տպավորությունները, մի խոսքով նրա անձնավորությունը դրսևորող, արտահայտող միջոց, հատուկ ուշադրության պիտի արժանանա, սակայն՝ մյուս միջոցների հետ միասին շաղկապված, գուգորդված և վոշ թե առանձին, տիրապետող պիտի լինի, ինչպես հին դպրոցում էր:

Մայրենի լեզվի նյութը.—Մայրենի լեզուն գուգորդված լինելով ուսուցման մյուս առարկաների, այսինքն՝ կոմպլեքսների հետ, վորոնք վերցրված են աշակերտների կյանքից ու գործունեությունից, նրանց գիտողություններից, տպավորություններից, ապրումներից, խաղերից, գործերից, իր նյութն ել դարձնում է հենց այդ գիտողությունները, ապրումները, տպավորությունները, և այլն: Կոմպլեքսները և դրանցից բխած աշակերտական ինքնուրույն գիտողությունները, աշխատանքները—ահա մայրենի լեզվի ուսուցման ամենագլխավոր նյութը:

Դասագրքերը և ընթերցանության այլ աղբյուրները պիտի հարմարվեն կոմպլեքսներին, պիտի լրացնեն, պարզաբանեն դրված խնդիրները: Դասագրքերը, ինչպես նաև մյուս աղբյուրները—գեղարվեստական գրվածքներ (արձակ թե վոտանավոր), լրագրական հոգվածներ, արդյունաբերական, գյուղատնտեսական, գիտականմատչելի գրքույկներ և հոգվածներ և այլն—ուսուցչի ձեռքին նյութեր են կոմպլեքսների մշակության համար: Այսպիսով դասագրքերի նյութերն ու դասավորությունը բնավ պարտադիր չեն և այն ուսուցիչը,



վորը սկսում ե գասագրքի առաջին հոգվածից և վերջացնում վերջինով, նա կոմպլեքսային ուսուցման մասին շատ թյուր հասկացողություն ունի: Ուսուցիչը մեծ աշխատանք ունի մայրենի լեզվի համար նյութեր հավաքելու խնդրում, նա ամենից առաջ պիտի իմանա ընտրություն անել, գասավորել նյութերը ըստ կոմպլեքսների, ունենալ հասակ գրագրարան ընթերցանություն պատրաստի նյութերի: Այստեղ բնականորեն առաջ ե գալիս, խմբական և անհատական, տնային ընթերցանության կազմակերպության գործը, վորը պիտի կատարի ու գեղավորի ուսուցիչը սերտորեն կապելով ընդհանրապես կոմպլեքսային ուսուցման և մասնավորապես մայրենի լեզվի հետ:

Լեզվային ունակություններ. — Վերոհիշյալ նյութերը մշակելիս՝ աչքի առաջ պիտի ունենալ, վոր աշակերտների մեջ առաջ բերվի գիտակից, գեղեցիկ ընթերցանության կուլտուրա, այսինքն՝ աշակերտները արտահայտիչ, վարժ, սահուն, գեղեցիկ ընթերցանության ունակություն պիտի ունենան, բացի այդ՝ լավ վարժված լինին իրենց մտքերը, ապրումները, գիտողությունները և այլն արտահայտել (գրավոր և բանավոր) պարզ, գեղեցիկ և սահուն լեզվով: Սրա համար անհրաժեշտ ե, վոր հենց սկիզբից հատուկ ուշադրություն դարձվի և աստիճանաբար զարգացվի, բոլոր խմբակներում հետևյալ միջոցները — դեկլամացիա (տրամաբանական շեշտ և առգանություն), դրամատիզացիա, ինսցենիրովկա (բեմադրություն): Աշակերտը պիտի խոսի, կարդա, պատմի, արտասանի պահպանելով խոսքի տրամամանական շեշտի և գեղարվեստական կողմի բոլոր կանոնները, վորով միայն կարող կլինի լավ հասկանալ ուրիշին և իր մտքերն ու ապրումները լավ հասկացնել ուրիշին, այլ խոսքով առած՝ սոցիալական շփման ու մարդկային հոգին զբաղորդ միջոցից — լեզվից կարող կլինի կատարելապես ոգավել:

Լեզվական այս ունակությունները մշակելու գործի ընթացքին թույլատրելի չե արվեստականություն, մեքենայականություն, կրկնողի գեր, պասսիվ վիճակ, աշակերտները պիտի աշխատեն ինքնուրույն կերպով, պիտի ունենան ակտիվ գեր, ինքնագործունեություն: Հին գաղոցն իր արտագրություններով, թելադրություններով, ուսուցչի պատմածը կամ գրքի կարգացածը բառացի պատմելով և նման միջոցներով սպանում եր աշակերտի ինքնու-

րոնությունը, նրա ակտիվությունը: Նոր աշխատանքային դպրոցը իր կոմպլեքսային ուսուցումով անողոր կռիվ պիտի հայտարարի այս ձևի պրոյեկտների դեմ: Այստեղ աշակերտը հենց սկզբից խոսում, պատմում, նկարագրում, մի խոսքով՝ իր մտավոր աշխարհը զբոսիվորում, արտահայտում ե ազատ ու անկաշկանդ, ինքնուրույն կերպով: Ուսուցիչը այստեղ աշխատակցող ե, ոժանդակող, նա իր բոլոր ուղղումները կատարում ե այնպիսի ձևով, վոր աշակերտը ինքը գլխի ե ընկնում, գիտում, նկատում իր սխալը և գիտակցաբար ուղղում: Ուսուցիչն այստեղ ամեն բանում և ամենից առաջ զիմում ե աշակերտի գիտակցության, ինքնագիտողության և ամեն կերպ հեռու պահում աշակերտին մեքենայականությունից, կրկնողի դերից: Այսպես ե վարվում աշակերտների հետ ուսուցիչը իր դասավանդության բոլոր ճյուղերում և խնդիրներում, յերբ թափանցել ե կոմպլեքսային ուսուցման ելույթյան մեջ:

Գրագիտություն. — Կոմպլեքսային յեղանակով դասավանդելիս չի կարելի առաջնորդվել «հնչական» կոչված մեթոդով, վորը գրագիտությունն սկսում ե աշակերտի մտքին ու զարգացման անհամապատասխան, անմատչելի, հնչուններով, դադարկ, անիմաստ ձայներով, վորոնց կյանքում յերեք չի հանդիպել: Կոմպլեքսային ուսուցման բոլոր հեղինակավոր մանկավարժները (տեսաբան թե գործնական) հանձնարարում են ամբողջական բառերի մեթոդը, վոր հիմնված ե արդի մանկավարժության նորագույն տվյալների վրա: Ամբողջական բառերի ուսուցումով միայն հնարավոր ե հեռու պահել աշակերտին անիմաստ բաներ կրկնելուց, մեքենայականությունից, կրավորական գերից: Այստեղ աշակերտը որինակ գիտում ե մի բույս, մի կենդանի, մի ծաղիկ, մի թռչուն, մի իր, նկարագրում ե, պատմում նրա մասին և նրա անունը գրելու պահանջն զգում: Ուսուցիչը զրագիտությունը սկսում ե հենց այն մոմենտին, յերբ աշակերտը գրելու բնական պահանջն ե զգացել:

«Հնչական» մեթոդով այսպիսի սկզբնավորությունն անհնարին ե: Աշակերտը պահանջված բառը նկարում-գրում ե (ի հարկ ե նմանեցնելով գրված մոդելին կամ ուսուցչի գրածին) մի կտոր թղթի վրա և ունենում իր կազմած պլակատը: Սկսվում ե այս ձևի ուսուցումը, միշտ ամբողջական բառերով ու պլակատներով: Գրա-



գիտությունը սկսվում է ձեռագրից, վոր ինչքան կարելի է պարզ պիտի լինի, առանց ավելորդ գծերի ու գծիկների և նման, մոտիկ տպագրին: Անշուշտ գրելու և կարգալու գործողությունները զուգընթաց պիտի կատարվեն և վոչ թե անջատ-անջատ, ինչպես հին դպրոցն եր անում: Ամբողջական բառերով ուսուցանելու մեթոդի յերկրորդ քայլը պիտի լինի լավ սովորած, յուրացրած բառերից անմիջապես անցնել պարզ խոսքեր, նախադասություններ կազմելուն, գրելուն, կարգալուն: Գրաճանաչությունը կամ տառաճանաչությունը այս մեթոդի մեջ կատարվում է շատ ուշ, առաջին տարվա վերջերին, յերբ աշակերտներն արդեն բավականին լեզվական-հնչական պաշար, մտապատկերներ ունեն, կարող են բառերի ընդհանուր պատկերից անցնել մասնավորին, այսինքն՝ անալիզին: Այս պատճառով հնավարություն է ստեղծվում գրել-կարգալ սովորեցնելիս պահպանել այն սկզբունքը, թե աշակերտը իր ամեն մի աշխատանք, ամեն մի գործ պիտի կատարի գիտակցաբար, ինքնուրույն, ակտիվ կերպով: Այստեղ մենք մեջ ենք բերում «Тыс»-ի կոմպլեքսային ծրագրում գրված հետևյալ տողերը. «հին դպրոցը ուղղագրությանը մեծ ժամանակ եր նվիրում, սակայն՝ առանց դրական հետևանքների հասնելու: Քննության համար պատրաստված համարյա անսխալ գրող աշակերտը կարճ ժամանակ անց, դարձյալ գրում եր կոսկիտ սխալներով»: Այս շատ ճիշտ գիտողություն է, վորովհետև հին դպրոցը գրավորի խնդրում, ինչպես և ուրիշ շատ խնդիրներում հիմնվում եր մեքենայականության, անգիտակից վարժությունների վրա, վորոնք մեծապես վնասում են մտքի ընդհանուր զարգացման, մշակման գործին:

4) Գրավոր.—Ամենից առաջ պիտի նկատել, վոր գրավորների խնդրում պիտի չափազանց մեծ ջանք գործ դնել հեռու մնալու համար աշակերտներին կրկնողի, մեքենայի դերում դնելուց: Մեղանում գեռ շատ ու շատ է տարածված այն միտքը, թե գրավոր աշխատանքները, մասնավանդ I խմբակներում, պիտի հիմնել արտագրության, թելադրության, մի խոսքով՝ ընդորինակության վրա, այսինչ բոլորովին հակառակ պիտի լինի: Հենց առաջին քայլերից, առաջին խմբակից գործը պիտի դնել հաստատուն հիմքերի վրա, աշակերտի ինքնուրույնության, գիտակցության, ինքնադիտ-

դության վրա: Մեքենայորեն սովորող աշակերտը անսխալ ու գեղեցիկ կընդորինակի, կարտագրի, բայց դա փոխանակ ոգուտ տալու նրա մտավոր զարգացման գործին, մեծապես վնասում է աշակերտին հենց սկզբից մեքենայականության վարժեցնելով, կրկնողի ընդորինակողի դերում դնելով: Լավ է սխալներով ու տգեղ, բայց ինքնուրույն գրությունը, քան թե գեղեցիկ ու անսխալ ընդորինակությունը: Հին դպրոցի բոլոր փորձերը ցույց են տվել, վոր անգիտակից, մեքենայական վարժությունները վոչ մի դրական հետեվանքի չեն հասցնում: «Քննության համար պատրաստված անսխալ գրողը կյանքում, շատ կարճ ժամանակից հետո, ամենակոպիտ ուղղագրական սխալներն է անում»: Միակ ուղիղ ճանապարհը ինքցուրույն ազատ գրության ճանապարհն է, հեռու մեքենականությունից, ընդորինակություններից: Այս ուղղությամբ տառասխալներն ու այլ սխալները կվերանան շատ շուտ և հաստատուն կերպով: Գիտակցաբար ինքնուրույն գրելը պիտի լինի մի մեծ լոգունգ, վորի համար ամեն կերպ պիտի աշխատել, վոչ մի խոչընդոտի առաջ կանգ չպիտի առնել:

Գրավորները սրբագրել՝ սխալները կարմիր թանաքով ընգծելով կամ թե սխալի վրա ուղիղը գրելով, այլ խոսքով՝ տետրակը կարմիր գծերով ներկելով դրական հետևանքի չի կարելի հասնել: Սխալների վրա վոչ թե պիտի ուշադրություն հրավիրել, այլ ընդհակառակը սխալներից միշտ պիտի հեռու պահել աշակերտներին: Այստեղ առաջնորդող սկզբունքը պիտի լինի սխալները կանխել, ամեն կերպ աշխատել, բոլոր միջոցները գործադրել, վորպեսզի աշակերտը սխալ չունի: Յեթե այնուամենայնիվ աշակերտը սխալներ է անում, ուսուցիչը այդ պիտի նկատի և աննկատելի կերպով հաջորդ գրավորների ընթացքում նախազգուշացնող միջոցների դիմի, վոր աշակերտը միևնույն սխալները չկրկնի: Մենք այստեղ հնարավորություն չունենք, տեղի սղության պատճառով, ավելի յերկար կանգ առնել և ցույց տալ այն միջոցները, վորոնք գործադրվում են սխալները կանխելու ընդհանրապես և մասնավորապես յեղած սխալները նորից չկրկնելու համար:

Քերականություն.—Քերականության, այսինքն խոսքի զըննության համար առանձին պարապմունքներ չպիտի լինեն, այլ



պիտի տարվեն զուգընթաց ընդհանուր աշխատանքներին: Այստեղ ևս, ինչպես ուսուցման բոլոր ճյուղերում պիտի հիմնվել գիտակցություն, ինքնուրույնություն, ինքնադիտողության վրա՝ հեռու մնալով ամեն տեսակ արվեստականությունից, մեքենայականությունից: Ինչպես ամեն խնդրում այստեղ ևս աշակերտի հոգեբանությունը պահանջում է, վոր սկզբում ընդհանուրը տրվի և ապա մասնավորը, անալիզը: Այստեղ, հենց առաջին խմբից սկսած, պարզ, համառոտ խոսքը պիտի դառնա գննողության առարկա ու մենից առաջ, ապա բառը, այնուհետև հնչունը, ձայնը, այսպես պիտի վարվել բոլոր խմբակներում և գնալով ընդլայնել գննողության շրջանակը նայած խմբակի զարգացման, պատրաստության: Քերականությունը առաջին աստիճանի դպրոցում գործնական բնույթ պիտի կրի միայն և այս աշխատանքները պիտի տարվեն նույնպես գործնական յեղանակով: Հատուկ ուշադրություն պիտի դարձնել բառերի ձևական կազմի, արտաքին փոփոխության վրա (բառակազմություն, բառերի աճեցման, հոլովման, խոնարհման գեպքում առաջացած փոփոխությունների): Այս բնական փոփոխությունների հետ պիտի կապել բառերի իմաստը և նրա փոփոխությունը անշուշտ գործնական նպատակով: Վոչ թե քերականական կանոնների մեքենայական ուսացումն է լեզու տալիս, այլ դպրոցի ուսուցման ամբողջ նյութը՝ տրված մանկավարժական առողջ սկզբունքներով:

## ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Առաջին աստիճանի դպրոցների համար մեր հասարակատության ծրագրի բովանդակությունը բնորոշողը հանդիսանում է հասարակագիտության դերը և նշանակությունը մեր դպրոցներում, վորոնք գետեղված են ԴԿ-ի նոր ծրագրում: Ըստ այդ ծրագրի դրությունների ամբողջ կյանքը սնված պետք է լինի հասարակագիտական տեսակետներով և այդ առարկայի ավանդումը պետք է իրենից ներկայացնի իրական կյանքի կոնկրետ և հարատև փոփոխվող յերեվությունները:

Այդ առարկան ավանդելու համար իբրև ղեկավար ցուցմունք, մենք կարող ենք մատնանշել «հասարակագիտությունը I աստիճանի դպրոցում» հոդվածը, վորի մեջ ցուցադրած են նրա հիմնական սկզբունքները:

Անհրաժեշտ ենք դանում նաև, մի քանի ցուցմունքներ անել մեր ծրագրի կազմության, ծավալի, միաժամանակ և նրա մեջ յեղած ամբողջ կոնկրետ նյութի ոգտակործելու ձևի վերաբերյալ:

Այդ ծրագրերում մենք աշխատել ենք տալ ամբողջ հասարակագիտության նյութը, — վորը պետք է մշակվի I աստիճանի դպրոցի վերջին յերկու խմբակներում, — հարմարեցրած Ազրբեյձանի մեր դպրոցական պայմաններին, այն նպատակով, վոր I աստիճանի դպրոցներ ավարտողները բավականաչափ պատրաստ լինեն հասկանալու իրանց շրջապատող ժամանակակից իրականությունը և ընդունակ լինեն գիտակցորեն իրականացնել այն սոցիալական ձեռնարկությունը, վորը պահանջում է կոլեկտիվ կյանքը:

Յերկրորդ աստիճանի դպրոց մտնող և իր ուսումը շարունակել ցանկացողը ապագա դասընթացի կարգավորման համար, այդ կծառայի վորպես հիմք: Իսկ դպրոցը թողնողների նկատմամբ — այդ կլինի տարրական ձևով քաղաքական կյանքի պատրաստություն:

Այդ պատճառով մեր ծրագիրը ուսուցչի ձեռքին պետք է ծառայի վորպես մանրամասն ուսումնասիրելի նյութ, վորը նա իր հայեցողությամբ պիտի դասավորի իր աշխատանքներից յեկնող որեկտիվ պայմանների համեմատ:

Հասկանալի յե, վոր գյուղում դաստիարակված պետք է սկսի տե-



Լուսժողկոմնաշին կից հասարակագի-  
տության ծրագրի մշակող հանձնա-  
ժողով:

Սակայն շնորհիվ գործնական նշանակություն, տոկոսները և տոկոսային հարաբերությունները մեր գալըցու աչքի ընկնող տեղ են բռնում: Աշակերտները հաճախ հաշվելու են տոկոսային հա-



րաբերություններ, քանի վոր շատ բնական է ամեն տեսակին հա-  
րաբերություններն արտահայտել տասնորդական և հարյուրերորդա-  
կան մասերով:

Այդ պատճառով ել տասնորդական կոտորակներին պիտի ըստ  
հնարավորության շուտ ծանոթացնել, մանավանդ վոր դրանք բնա-  
կան կերպով շարունակություն են կազմում ամբողջ թվերի, և բո-  
լոր գործողությունները, մանավանդ գումարումն ու հանումը, կա-  
տարվում են նույն յեղանակով: Միայն բաժանման համար պետք  
կլինի իմանալ ընդհանուր հայտարարի բերելը, այդ ել համեմատա-  
բար հեշտ է կատարվում տասնորդական կոտորակներով: Տասնոր-  
դական կոտորակներով գործողությունները հեշտանում են մանա-  
վանդ, յերբ լայն չափերով է գործադրվում մետրական սխառմը,  
վորի բարդ անվանական թվերը տասնորդական կոտորակներին  
բնույթ են կրում: Մետրական չափերի կիրառումը հետզհետե վտա-  
րելու է դպրոցներից ուսուսական չափերը: Դրանով ել ավելի կա-  
րևոր է դառնում տասնորդական կոտորակների յուրացումը, յերկ-  
րորդական տեղ տալով հասարակ կոտորակներին:

Մետրական չափերի հետ ծանոթացնելիս, աշխատանքի ընթաց-  
քում գուցե թացաբար պիտի կազմել տալ դասարանական տախ-  
տակներ, վորոնք հետզհետե լրացվելով՝ դառնալու են դպրոցական  
թանկարանի կարևոր ուսումնական պիտույքներ:

Հասարակ կոտորակների պարզ ձևերը շատ հաճախ են հանդի-  
պում գործնականում. դրա համար ել հասարակ կոտորակների չորս  
գործողությունները պիտի լավ յուրացվեն: Սակայն կարիք չկա  
յերկար զբաղեցնելու աշակերտներին հասարակ կոտորակներով  
կազմած բարդ խնդիրներով ու բթացնող վարժություններով: Յեվ  
քանի վոր գործնական կյանքում հասարակ կոտորակները հետզհե-  
տե փոխարինվելու են տասնորդական կոտորակներով, անհրաժեշտ  
է իմանալ հասարակ կոտորակը տասնորդականի վերածելը և մոտա-  
վոր թվերով գործողություններ կատարելու անճշտությունը վորո-  
շեղ: Ուստի պիտի վարժեցնել յերեխաներին հաշվումների ժամա-  
նակ դեն գցել տասնորդական նշանները, վորոնք քիչ են անդրա-  
դառնում գործողության հետևանքի վրա: Մնացորդով կամ ավել-  
ցուկով թվեր հաճախ են հանդիպում հասարակ չափումների ժա-  
մանակ, վորոնք պիտի դեն ձգել, յերբ անհրաժեշտություն չի  
զգացվում գիտական ճշմարտությունը վորոշելու:

Գումարի և արտադրյալի անճշտությունները գտնել շատ  
հեշտ է հասարակ չափումներով և հաշվելով: Ավելի դժվար է գտնել  
հանման և մանավանդ բաժանման դեպքերից առաջացած սխալնե-

րը. բայց առանձին դեպքերում այդ սխալները գտնել կարելի է  
առանց մանրակրկիտ դատողությունների, մանավանդ վոր տաս-  
նորդական կոտորակներով գործողություններ կատարելիս խոշոր  
հայտարարների հետ գործ ունենալը շատ հաճախ չէ պատահում:

Գտնել անճշտությունները կարևոր է նաև հասարակ կոտորակ-  
ներով և ամբողջ թվերով գործողություններ կատարելիս, վորտեղ  
թվեր կլորացնելը հաճախ շատ է հեշտացնում գործողությունները՝  
առանց զգալի կերպով խեղաթյուրելու հետևանքը. որինակ՝ 999-ի  
փոխարեն 1000-ը 4-ի բաժանել, հեշտ է վորոշել սխալը և ասել թե  
ինչ նշանակություն ունի այդ սխալը տվյալ դեպքում: Սակայն  
պիտի զգուշանալ մոտավոր հաշվումների ժամանակ չափազանցու-  
թյունների դիմելուց: Մոտավոր հաշվումներին պիտի դիմել միայն  
գործնական հաշվի անհրաժեշտ դեպքերում, ավելի հաճախ IV  
խմբակում, յերբեմն նաև III-ում, յերբ այդպիսի անհրաժեշտության  
դեպքեր պատահեն:

Մեծ ուշադրություն պիտի դարձնել բանավոր վարժություն-  
ների վրա մանավանդ I և II խմբակներում: Այդ դասարաններում  
թվական վարժություններն ու չորս գործողություններն իրենց բո-  
լոր մանրամասնություններով յեթե գիտակից կերպով յուրացնեն  
յերեխաները 100 ի շրջանում, արդեն ապահովված են գրեթե կի-  
սով չափ հետագա աշխատանքները: Վորքան լավ հիմք կառուցվի  
մատեմատիկայից I և II խմբակներում, այնքան անսայթաք և ա-  
րագ կգնա գործը մյուս խմբակներում: Միանգամայն անհան-  
դուրժելի է այն երևույթը, յերբ բարձր խմբակների աշակերտնե-  
րը և ապա կյանքի մեջ ապագա քաղաքացին յերկանիշ թվերի հետ  
գործ ունենալիս ( $26+37$ ,  $72-27$ ,  $34 \times 18$ ,  $84:12$ ) դիմում է  
թղթի և մատերի ոգնության:

Բազմապատկումն իբրև գումարման ձևերից մեկը պիտի հեն-  
վի գումարման վրա: Այս ձևով աստիճանաբար պիտի անցնել բազ-  
մապատկության աղյուսակը, ապա յերկնշան թվերի բազմապատ-  
կումը միանշանով և հակառակը:

Բաժանման ժամանակ մեծ ուշադրություն պետք է դարձնել  
I թե II խմբակներում մնացորդով բաժանման վրա ( $62:8=7(6)$ ),  
վորպեսզի III խմբակում բազմանշան թվերով բաժանումն անցնե-  
լիս և ապագայում գործողությունը կատարելիս, ստիպված չլինեն  
յերկար կանգ առնել այդ հաշիվների վրա:

Նախ քան բազմանշան թվեր անցնելը, հարկավոր է լավ յու-  
րացնել տալ յեռանիշ թվեր գրելը: Պիտի գաղափար ունենան միա-  
վորի, տասնավորի և հարյուրավորի մասին (վորոշել յուրաքանչյու-



րի տեղը)։ Յեռանիշ թվեր գրելիս հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն թվերի վրա, վորոնց մեջ բացակայում են այս կամ այն կարգը (670, 800, 508), նման վարժություններից հետո է, վոր նոր պիտի դիմվի բազմանշան թվերի գրությունն ու վարժությունը։ Ապա մեծ տեղ պիտի տալ այն վարժություններին, ուր գործողության ելմաններին մեկը անհայտ է, որինակ՝

$$X + 27 = 85$$

$$X - 13 = 42$$

$$12 \times X = 72$$

$$35 : X = 7 \text{ և այլն։}$$

Խնդիրների լուծումը լայն կիրառումն պիտի ունենա դասավանդման ժամանակ։ Սակայն դա չպետք է հին դպրոցի նման, կամ ինչպես շատերն են մինչև այժմ գործադրում, լինի հնարովի, իրականության անհամապատասխան նյութեր, արհեստական թվեր, բարդ, խճճված գործողություններ, սարքովի հաշիվներ և դատարկ բովանդակություն։ Հարկավոր է խնդիրների նյութը վերցնել իրական կյանքից և կապել շրջապատող կյանքի հետ։ Իբրև նյութ կարող են ծառայել մարդու մարմինը, բույսի կյանքը, գյուղատնտեսությունն ու ֆիզիկական-քիմիական նյութերը, գազառի կյանքը, բերքերը, հողը, մեր յերկրի և խ. Միության մասին փաստացի և կենսական խնդիրները, դրսի յերկրների կյանքը, արդյունաբերությունը, յերկրագործությունը, — մի խոսքով այն ամենը, ինչով զբաղվում ու աշխատում է յերեսան։

Ուսուցչին լայն հնարավորություն է տրվում մատեմատիկական նյութերի վերամշակման համար նյութի վորոնումներն ու մշակումները անել իր շրջանի համար եյական և կարևոր համարված նյութերից, վորոնք առնչություն ունեն մշակվող թեմաների նյութերի հետ։

Ի հարկ է, սկզբնական շրջանում ուսուցիչը մեծ աշխատանքներ է թափելու, մեծ դժվարությունների է հանդիպելու, սակայն ժամանակի ընթացքում հետզհետե կընդատարակվեն համապատասխան դասագրքեր զգացվող պահանջը բավարարելու համար։

Հինգերորդ խմբակում գլխավոր ուշադրությունը պիտի դարձնել հարաբերությունների, համեմատությունների և մանավանդ տոկոսների վրա։ Յերեսանները այն չափ բազմակողմանի կերպով պիտի ուսումնասիրեն այս բաժինները, վոր կարողանան իրենց գործնական աշխատանքների ժամանակ լայն չափերով ոգտագործել այդ գիտելիքները։

Առաջին աստիճանի դպրոցում աշակերտները պիտի ձեռք բերեն նաև տարրական հաշվետարական ունակություններ — կադմել նախահաշիվներ, գրավոր պարզ ձևով արտահայտել մոտքն ու յեղը և այլն։

Գործնական բնույթ կրող այս աշխատանքների առաջին շարքում գլխավոր տեղ են գրավում գրաֆիկական պատկերացումներ, վորոնք նոր մեթոդներով և նոր նյութերով աշխատող դպրոցների համար առաջնակարգ նշանակություն են ստանում։ Գրաֆիկական պատկերացումներն այն առավելությունն ունեն, վոր թույլ են տալիս յերեսային հեշտությամբ նկատել մեծությունների փոխադարձ կախումը պատկերավոր ու դիտողական ձևով։

Ներկա դպրոցի աշխատանքների մեջ գրաֆիկական լեզուն անփոխարինելի միջոց է համարվում և արդեն հաջողությամբ գործադրվում է դպրոցներում։ Ներկա ծրագրի հիմնական սկզբունքներն և աշխատանքային դաստիարակության վոգուն աշխատանքի այս մեթոդը միանգամայն համապատասխան է։

Գրաֆիկական լեզուն գործադրվում է գրեթե առաջին խմբակներից սկսած, սակայն շատ նվազ կերպով։ մինչդեռ III խմբակից սկսած այս մեթոդը ամենագործածականը պիտի դառնա։ Մեր ծրագրի մի շարք հարցերն ու խնդիրները կարող են գրաֆիկական մեկնաբանությունների նյութ դառնալ։

Մատեմատիկական ծրագրերի յերկրորդ հիմնական նյութն է յերկրաչափական մի շարք գիտելիքները, վորոնք սերտ կերպով կապված են թվաբանության հետ գործնական աշխատանքների ժամանակ։ Այս գիտելիքների կարևորությունը այնքան մեծ է, վոր յերկրաչափական վորոշ նյութեր նույնիսկ տեղ են գտել առաջին խմբակներում (քառակուսի, յեռանկյունի, ուղղանկյունի, շրջան, հասկացողություն մակերևույթի, ծավալի և յորանարդի մասին)։

Յերկրաչափական ամբողջ աշխատանքը պիտի գործական բնույթ կրի, պիտի լայն չափով ոգտագործել կտրելը, վերադրումը, աչքի չափը վորոշելը, կադապարումը և այլն. որինակ՝ ուղղանկյան մակերեսը վորոշելու համար վերածել (կտրատել) ուղղանկյունը շերտերի և հաշվել նրանց մեջ պարունակվող քառակուսի միավորները։ Ծավալի յնդրում նշանակալից է գլանի և ուղղանկյուն կողերի ծավալի հաշվելը։ Ծավալի ուսումնասիրության ընթացքում գլխավորապես պետք է կիրառել պարզ կադապարումը։

Առհասարակ յերկրաչափական պարապմունքների ժամանակ պիտի դեկավարվել դպրոցի գործնական պահանջներով։ Ամենամեծ



ուշադրությունը պիտի դարձնել մակերեսները (հողաբաժինների) վորոշելուն:

Գործնական նկատումներով պիտի լավ յուրացնել փոխադրիչի (транспортир) միջոցով անկյուններ չափելու յեղանակները, դիագրամների գծագրման, յերկրաչափական կառուցումների և այլ աշխատանքների ժամանակ պետք է մեծ չափով ոգտագործել կարկինը, քանոնը, ուղղաչափը (наугольник) և այլն: Պիտի հատուկ ուշադրություն դարձնել հողաչափման յեւ կապակագծման աշխատանքներին:

Ուսման յերրորդ տարուց սկսած պիտի սովորեցնել հողամասեր գծագրելը (գլորոցի հողամաս, սեփական տնտեսություն):

Հինգերորդ խմբակում գաղափար է տրվում նաև հանրահաշվական մի քանի գիտելիքների մասին, վորոնք շարունակություն և խորացում են թվաբանական աշխատանքների: Թվաբանական աշխատանքների հետ միաժամանակ պիտի գուզընթաց կերպով ընթանա նաև ընդհանուր ձևերով խնդիրներ կազմելու աշխատանքը, վորպեսզի այդ ընդհանուր ձևերից կարելի լինի մասնավորները դուրս բերել: Բացի այդ, դրանով աշակերտներին վարժեցնում ենք նոր ձևերով վճուկ դանազան տեսակի խնդիրներ և հավասարություններ կազմել: Իսկ հավասարություններով խնդիր վճուկիս գործնականորեն ձեռք են բերում հանրահաշվական վորոշ ունակություններ:

Չնայելով վոր մատեմատիկան ստորաբաժանված է թվաբանության, յերկրաչափության և հանրահաշվի, բայց այդ բաժանումը միայն ձևական բնույթ ունի, ցանկալի է, վոր գործական աշխատանքների ժամանակ այդ բաժինները գուզընթաց կերպով տարվեն: Որինակ՝ վորե է հողամաս ուսումնասիրելիս, մենք վորոշում ենք նրա ձևը (յերկրաչափական ելեմենտներ), մեծությունը (թվաբանություն և յերկրաչափություն), թվաբանական ճիշտ հաշվումներ ենք անում (թվաբանություն), ձգտում ենք ընդհանուր ֆորմուլայով կազմել նման խնդիրները վճուկու (թվաբանություն և հանրահաշիվ) և սովորում ենք գտնել ելեմենտներից մեկը մյուս տվյալների ոգնությունը (հանրահաշվական հավասարությունները կազմել):

## ՄԵԹՈԴԱԿԱՆ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՃԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

### I

Կոմպլեքսային դասավանդման ժամանակ բնագիտությունը և աշխարհագրությունը չեն ավանդվում վորպես անջատ առարկաներ, այլ նրանք կապակցված պիտի տարվեն մյուս նյութերի հետ:

Բնագիտության դասավանդությունը պիտի հիմնվի գյուղի արդյունաբերության վրա: Այս անհրաժեշտ եվոլմիայն գյուղի, այլ և վորոշ չափով քաղաքի դպրոցի համար: Միայն ի հարկե արդյունաբերական խոշոր քաղաքների դպրոցներում այդ աշխատանքի հիմքը պիտի լինի արդյունաբերությունը, վորպես բանվոր բնակչության կյանքի հիմքը: Այս դեպքում ուսումնասիրության առարկա յե դառնում ավելի մեծ չափով առևտուրն ու արդյունաբերությունը և գլխավոր ուշադրություն դարձվում ֆիզիկո-քիմիական գիտելիքների վրա: Ի հարկե, յերբեք չպիտի մոռանալ, վոր սերտ կերպով պիտի պահպանվի քաղաքի և գյուղի կապը, վորպես միմիանց լրացնող, վորպես աշխատավորության և նրանց արտադրած բարիքների մի ամբողջություն կազմող:

Դպրոցական աշխատանքին տրվելիք մնացած կենսական նյութը պիտի կազմի առողջապահությունը: Աշակերտական նստարանից սկսած յերեխան պիտի արմատացնի իր մեջ առողջապահական հիմնական կանոնները և նրանց միջոցով ել դպրոցն ազգի յերեխայի ընտանիքի և հասակավորների առողջապահության պահպանման վրա: Այս պիտի անել վոշ միայն բնագիտության դասերին, այլ և ամեն անգամ առիթ պատահած ժամանակ: Իսկ առողջապահական հատուկ կոմպլեքսների նպատակն է առանձնապես յերեխաների ուշադրությունը կենտրոնացնել առողջապահության գլխավոր հարցերի վրա, վորպեսզի նրանց զրգենք սանիտար—առողջապահական համապատասխան կազմակերպություններ ստեղծելու թե իրենց աշակերտության համար և թե մասնակցելու հասարակությանը ծառայող ամեն տեսակ առողջապահական հիմնարկներին:



Բնագիտությունը դասավանդման մեթոդը պիտի լինի հետախուզական մեթոդ: Աշակերտները ուսուցչի հետ միասին եքսկուրսիաների ժամանակ պիտի դիտեն բնությունը, նրա յերևույթները, ծանոթանան դրանց հետ մանրագնանին կերպով ըստ իրենց փորձի ու մտավոր պաշարի, մշակեն դիտած նյութը դասարանում և համապատասխան յեզրակացություններ հանեն: Այդ բոլորը աշակերտին ինքը պիտի անի ուսուցչի ղեկավարությամբ: Ուսուցչի դերը պիտի լինի նրանց ուղղություն տալը և նրանց ուշադրությունը նախընտրած նպատակի շուրջը կենտրոնացնելու:

Ուսուցչի կարևորագույն հոգսը պիտի լինի սովորեցնել փորձեր կատարել և ինքնուրույն կերպով հանել տալ համապատասխան յեզրակացություններ: Առաջին աստիճանի դպրոցում, մանավանդ նրա ցածր խմբակներում, յերբեք ուսուցչիչը չպիտի ձգտի աշակերտներին պատրաստի գիտական տեղեկությունների պաշար տալ կամ գրքերից նյութեր նշանակել սովորելու:

Աշակերտի համար ամենամեծ գիրքը պիտի լինի բնությունը, վորը յերեխան միշտ պիտի գիտի, իսկ գիրքը ծառայի աշակերտին վորպես ընթերցանության նյութ այս կամ այն գիտելիքը ավելի ընդլայնելու, ավելի խորացնելու համար:

Առաջին շրջանի եքսկուրսիաները նորեկների համար պիտի կրեն ավելի շուտ զբոսանքի բնավորություն, վորի ժամանակ յերեխաները գիտելու յեն յեղանակների փոփոխությունները, հավաքում են նյութեր դասարանում կենդանի անկյուն կազմելու, զարդարողական աշխատանքների կամ դիտողությունների համար:

Եքսկուրսիաների ժամանակ բնության հետ ծանոթանալիս, պիտի յերեխայի ուշադրությունը հրավիրել խնամքով վերաբերվել դեպի բույսն ու կենդանիները և հոգ տանել նրանց պահպանման համար:

Եքսկուրսիաներից բացի յերեխաները դասարանում ստացած ցուցմունքների համեմատ գիտելու յեն տանը ինքնուրույն կերպով բույսերի, ընտանի կենդանիների կյանքը, նրանց վրա գործ դրած խնամքը և այլն: Դասարանի կենդանի անկյունից ևս մեծ չափով պիտի ոգտվել բնության դիտողությունների համար:

Փոքր յերեխայի համար բնության և շրջապատող կյանքի մեջ ամենամատչելի և հետաքրքրական նյութը սեզոնային յեղանակներն են իրենց փոփոխություններով և գեղեցիկ մոմենտներով: Ահա ծառերի գունավորումը, տերևաթափը, առաջին ձյունը, սառ-

նամանիքը, գարնան առաջին ծաղիկները, գուլթանավորների վարի գնալը, առաջին հունձը, այգեկուլթը, այդ ամենը ամենագեղեցիկ ապրումներն են տալիս յերեխաներին, բարձրացնում նրանց ենեզրակայի թափը և սեր զարթեցնում դեպի բնություն:

Յերեխաներին առաջին անգամ բնության հետ ծանոթացնելիս, պետք է մեծ ուշադրություն դարձնել նրանց զգայարանների զարգացման վրա, վորպես անհրաժեշտ հիմք հետագա ավելի ճշգրիտ դիտողական աշխատանքների: Ահա տերևների գունավորումը, գարնան ծաղիկները, թռչունների փետրավորումը, նյութ են տալիս աչքի վարժության, գույները և նրանց նրբությունները վորոշելու:

Հենց առաջին տարվանից յերեխայի ուշադրությունը պիտի դարձնել իր վրա, իր մարմնի պահպանման վրա և այդպիսով ծանոթացնել մարդու կազմվածքի հետ:

Այս ավելի հեշտ է կատարել յերեխաների բժշկական քննություն ժամանակ: Այստեղ ևս չպիտի ձգտել առանձին գիտելիքներ տալ, շատ ավելի կարևոր է յերեխայի մեջ ստեղծել մի շարք առողջապահական ունակություններ, վորոնք նրան պահպանում են վարակիչ հիվանդություններից:

### III

Յերկրորդ խմբակում ևս բնության յերևույթները մյուս յերևույթների հետ միասին ուսումնասիրվում են ընդհանուր կոմպլեքսներում: Այս դեպքում յերեխաներն արդեն պիտի ձեռք բերեն՝ 1) Վորո՞ւ ունակություններ և 2) Գիտելիքների վորո՞ւ պատճառ:

Ունակությունների վերաբերյալ հարկավոր է յերեխաներին սովորեցնել մոտենալու բնության յերևույթներին, ակտիվ աշխատանքային տեսակետից, կարողանան գիտել, հասկանալ և գիտցածը ծառայեցնել բնության որեւիքները հայտնագործելու ոգտին: Այս խմբակում աշակերտների ունակությունները պիտի վերաբերվեն գլխավորապես գյուղատնտեսական և մասամբ կենսական ու տրնտեսական յերևույթներին: Իսկ այս խմբակում տարվա պարապմունքների ժամանակ ձեռք բերած գիտելիքների նվազագույն պաշարը պիտի լինի, ուսումնասիրել յերեխայի շրջապատում գտնվող կուլտուրական բույսերի և ընտանի կենդանիների կազմությունը և կյանքի տարրերը, գյուղատնտեսական կյանքի սեզոնային յերևույթները: Նյութը պիտի անցնել շատ կոնկրետ կերպով, դրա համար ել անհրաժեշտ է դասավորել տարվա յեղանակների համեմատ:



Ցանկալի յե, վոր յեղանակների, տարվա ուրիշ պայմանների, շրջապատի բույսերի ու կենդանիների դիտողությունները շարունակվեն յերկրորդ խմբակում ել, միայն ավելի խորացրած:

Տնտեսության մեջ կատարվելիք դիտողությունները և աշխատանքները բաժանված են բանջարանոցի, պտղատու այգու, դաշտի, ծաղկանոցի, թռչնոցի, անասունների բակի և այլն տեղերի աշխատանքների մեջ:

Յերկրորդ տարվա աշակերտները մասնակցում են գյուղատնտեսական կամ քաղաքային այլ աշխատանքներին թեթե և կերպով և ոգնում իրանց մեծերին և ավագ ընկերներին:

Հասկանալի պիտի լինի, վոր կոմպլեքսների բովանդակությունը, մանավանդ բնագիտության և տնտեսության տեսակետից, պիտի տարբերվի կլիմայական և գյուղատնտեսական զանազան շրջաններում և ամեն մի շրջան մշակի այն իր տեղական պայմանների համաձայն:

#### IV

Յերրորդ տարվա ծրագրի հիմքը աշխարհագրական պատկերացումն են—բնակավայրի ուսումնասիրությունը, վորի ֆոնի մեջ ուսումնասիրվում են գյուղի կամ քաղաքի, նրա շրջանի կլիման, վոդոլումը, հանքերը, բույսերը, վառելիքը, շարժիչ ուժերը, տեղական աշխատանքները և այլն:

Վորջան ել յերրորդ խմբակի բնագիտության նյութը բազմատեսակ յերևա, նա համենայն դեպս կմնա բնակավայրի ուսումնասիրության գաղափարի հետ միացած: Դրա համար ել ուսուցման յերրորդ տարին ստանում է տեղագիտություն (Краеведение) հարմար անունը:

Չափից դուրս կարևոր նշանակություն ունի տեղական բնության յերևույթների և տեղական կյանքի ուսումնասիրությունը: Այդ մեզանում շատ թույլ է դրված և դրա համար ել տեղական բնության և կյանքի ուսումնասիրությամբ պիտի շատ զբաղվել և այդ աշխատանքներին մասնակից անել նաև յերեխաներին: Ի հարկե դա գիտական ուղղության չպիտի ունենա:

Ուսումնասիրվելիք բոլոր յերևույթներին պիտի մոտենալ արտադրողական, հասարակական—տնտեսական տեսակետից, վոր աշակերտների մեջ սովորություն դառնա բնության ուսումնասիրվելիք յերևույթներին մոտենալ գործնական տնտեսական տեսակետով, վորպեսզի թե դպրոցական աշխատանքը և թե նրանց ուսումնասիրվելիք նյութը հասարակական արժեք ունենա:

Հասկանալի յե, վոր արտադրողական հիմունքով մշակման յենթարկվում են տեղագիտության և բնագիտության բոլոր բաժինները—հողը, ռելիեֆը, վոդոլումը, կլիման, բուսականությունը, կենդանիները և մարդկային բնակչությունը: Այդ ձևով ուսումնասիրվող տեղագիտությունը կդառնա արտադրական:

Շատ լավ կլինի վոր և ե նյութ ուսումնասիրելիս, սկսել ընդհանուր խնդիրներից և ապա հետզհետե մասնավորել: Որինակ, տեղական հողի ուսումնասիրության նպատակը չպիտի լինի զբաղվել նրա բաղադրության, ծագման և այլ հատկությունների պատմությունով, այլ պիտի ծանոթացվեն հողի ուսումնասիրության գործնական տարբերին, հողի տարբարվածման ամենապարզ միջոցներին և վորոշվեն նրա տնտեսական արժեքն ու թերությունները և ապա վերջացնել պիտանի հողերի բաժանման ուսումնասիրությամբ (դաշտերի, բանջարանոցների և այլն):

Չափազանց հեշտ կարելի է կազմակերպել տեղական յեղանակները, բնության և տնտեսության յերևույթների զարգացման ընթացքին հետևելու դիտողությունները:

Յեթե դպրոցն ունի հողամաս, նրա վրա կատարած աշխատանքները ավելի հետաքրքիր են դառնում, վորովհետե այս խմբակի ծրագրի մեջ մտնում է բույսերի կազմության և կյանքի հիմնավոր ուսումնասիրությունը: Աշակերտները փորձերին կատարելու յեն բույսի կյանքի ուսումնասիրությունը և հետևելու յեն նրա զարգացման ընթացքին, բնական պայմաններում և արհեստական հարմարեցումների ժամանակ:

Այդ փորձերը բացի գիտական, այլ և արտադրական բնույթ պիտի ունենան, վորովհետե նրանք ծրագրով կապված են տեղական գյուղատնտեսական արտադրությունը հիմնավորապես ուսումնասիրելու հանգամանքին:

Յեթե դպրոցը հողամաս չունենա, պետք է ոգտվել քաղաքի պարտեզի, զբոսավայրի, կամ դպրոցում աճեցրած բույսերից, վորը հեշտ կերպով կարելի յե կատարել հողով լցրած արկղների կամ ամանների մեջ:

Այս խմբակում դրված է և մի յենթա-կոմպլեքս—«նավթը», վորը հարմարեցրած է հատկապես Բազվի դպրոցների համար: Դա վառական դպրոցները կարող են դրանից ընդհանուր գծերով ոգտվել և զրույց ունենալ ընդհանուր վառելիքների թվում նաև նավթի մասին:

Յերրորդ տարում բնական, վոր աշակերտները պիտի կանո-



նափորապես ծանոթանան քարտեզի և քարտեզագրական պատկերավորումներին՝ հիմք ունենալով իրանց հիմնական աշխարհագրական ծանոթությունները և ապա դիմեն քարտեզների ընթերցմանը:

Այս խմբակում աշակերտները պիտի սկսեն ինքնուրույն քարտեզներ և դիագրամներ նկարել, ոգտվելով պատրաստի հարմար քարտեզների կոնտուրներին:

Այս խմբակից արդեն ուսուցիչը վորոշ թեքում պիտի աշխատի տալ իր անցնելիք նյութին—արդյունաբերական շրջանների դպրոցները պիտի ֆաբրիկ-գործարանային և այլ արդյունաբերական նյութերի ու կյանքի ուսումնասիրության վրա ծանրանան, իսկ յերկրագործական շրջանները՝ գյուղատնտեսական կյանքը ավելի մանրամասն ուսումնասիրեն:

## V

Չորրորդ տարվա նյութն արդեն դառնում է աշխարհագրական: Այդտեղ ուսումնասիրվում է մեր—Ադրբեջանի հանրապետությունը, նրա յերկիրը, կլիման, վոռոգումը, կենդանիները, ազգաբնակչությունը, յերկրի արդյունաբերությունը և աշխատանքի պայքարը այդ յերկրում: Ապա տարրական ծանոթություն է տրվում իս. Միություն աշխարհագրական դիրքի, արդյունաբերական կենտրոնների և նրա աշխատավորության մղած պայքարի մասին—և ապա տրվում ընդհանուր աշխարհագրական ծանոթություններ. մեր յերկրագունդը, նրա կազմությունը, կլիմայական գոտիները, ջրերի ու ցամաքի բաշխումը, յերկրագնդի վրայի բնակչության կյանքը նախամարդուց սկսած, ի հարկե այս բոլորը սովորելու յե շատ ամփոփ, այն չափով, վոր չափով հնարավորություն տրվի յերեխային գաղափար կազմելու, վոր մեր յերկիրն ել մի մասն է կազմում այդ մեծ մոլորակի, և մեր աշխատավորոնությունն ել մի մասն է համաշխարհային այն մեծ աշխատավորությանը, վորը տասնյակ դարերի ընթացքում շահագործվել է, պայքար է մղել ու մղում շահագործողների դեմ և վոր մեր մղած պայքարը մարդկության աշխատանքի ազատագրության համար յեղած կռվի ողակներից մեկն է:

Հինգերորդ խմբակում բնագիտության նյութերը ավելի խորանում և սխտեմի յեն վերածվում:

Այս խմբակում աշխարհագրությունը և հասարակագիտությունը միմիանց հետ ավելի սերտ են կապված և միմյանց լրացնող են:

## VI

Հինգերորդ խմբակում բնագիտական և աշխարհագրական գիտելիքները ամփոփվում են և սխտեմի վերածվում գիտական յեղանակով, մնալով ի հարկե, միշտ կապված իրական, գործնական կյանքի հետ:

Այստեղ ծրագիրն արդեն զուտ տնտեսագիտական բնույթ է կրում. նախ ուսումնասիրվում է մեր յերկրի հողաշերտերը, նրա տեսակները, մշակման ձևերը զանազան շրջաններում, տեղումները, վոռոգումը և այդ ամենը կապվում գյուղատնտեսական արդյունաբերության հետ: Ապա բույսերի և կենդանիների մասին նախորդ տարիներում ձեռք բերած գիտելիքներն ամփոփելով, ուսումնասիրում է նրանց կազմաբանական մասը և աճեցման ու զարգացման պրոցեսը:

Ֆիզիկայից և քիմիայից տրվող տեղեկություններին, այս թե չորրորդ խմբակում, պիտի մոտենալ բիոլոգիական և տեխնիկական տեսակետից և տալ ելեմենտար կերպով այն անհրաժեշտ միմիումը, վորը պետք է գալու աշակերտի առորյա աշխատանքների համար և միաժամանակ հարկավորվում մարդու կյանքի բացատրության համար, վորպես մի բնական կենդանու:

Բույսերի և կենդանիների կյանքի մասին տեղեկություն տալուց հետո, պիտի բնականորեն անցնել կյանքի ծագման և նրա եվոլյուցիայի մասին: Աշակերտներին ելեմենտար կերպով պիտի ծանոթացնել Դարվինի թեորիայի և կյանքի զարգացման պատմության գլխավոր շրջանների հետ:

## VII

Առանձնապես խոսելով IV և V-րդ խմբակների աշխարհագրության դասավանդման մասին այն դպրոցներում, ուր կարող է դասավանդումը առարկայական սխտեմով տարվել—պիտի շեշտել մի հանգամանք, վոր աշխարհագրությունը առաջին աստիճանի դպրոցում որդանական և անբաժան մասն է ընդհանուր աշխարհագրություն ղաւընթացին:

Այն գիտելիքները, վորոնք ձեռք են բերվում բնության մեջ դիտելով նրա ֆիզիկական և քիմիական յերևույթները բուսական թե կենդանական աշխարհում, պիտի նորից ամփոփվեն և հիշվեն աշխարհագրության ժամանակ, յերբ մենք անցնում ենք վոր և է յերկրի մասին:

Վոր և է յերկրի բնությունը ծանոթանալիս, բնականորեն պիտի անցնել այն ֆակտորներին, վորոնցից կախված է այդ շրջանի



բուսական, կենդանական և մասնավորապես մարդկային կյանքը: Դա ջրի, քամու, արևի տաքություն աշխատանքն է: Վերջապես մարդիկ, նրանց բնությունից ունեցած կախումը մի կողմից և մյուս կողմից նրանց ստեղծագործական փոխազդեցությունը բնության վրա, յերկրագործության և արդյունաբերության ժամանակ, միշտ պիտի առաջին տեղը զբաղեն աշխարհագրության դասերի ժամանակ:

Աշխարհագրությունը ուսումնասիրում է բնությունն ու կուտուրան միացած կերպով, վորպես մի ամբողջություն, և դրանում է գլխավոր առավելությունը: Յեվ վորքան աշակերտը գիտակցորեն կարողանա ըմբռնել այդ կապը, այնքան նա ավելի կհետաքրքրվի աշխարհագրությամբ:

Մեծ ուշադրություն պիտի դարձնել մեր յերկրի ուսումնասիրության վրա: Աղբյուրներում մենք կգտնենք շատ հարուստ աշխարհագրական նյութ ամեն տեսակ յերկրներին հատուկ, սկսած լեռնային ցուրտ կլիմայից մինչև դաշտային, տաք անապատային կլիմա ունեցող յերկրներ՝ տարբեր կուլտուրայի բնակիչներով:

Լենքորանը՝ կարելի յե անվանել զբեթե տրոպիկական մի անկյուն, Մուղանը և Կուր — Սրաքս գետերի ստորին հովիտը, համարյա մեր Յեգիպտոսն է, նախալեռնային շրջանը՝ այգեգործական շրջանն է, վոր կարելի յե դարձնել ապագայում միապաղաղ հսկայական այգիների մի յերկիր. լեռներում ալպյան շրջանն է ալպյան կուլտուրայով:

Բագուն իր աշխարհահռչակ նավթով դառնում է համաշխարհային արդյունաբերական վայր և ամբողջ արևելքի կուլտուրական կենտրոնը:

Այս ամենը հարուստ նյութեր են աշխարհագրության դասերի ժամանակ, վոր կարող են այդ դասերը դարձնել շատ ուսանելի և հետաքրքրական:

Թե և այդ նյութերի մեծ մասը անմշակ է և մեր յերկիրը բիշ ուսումնասիրված, սակայն այդ ուսումնասիրության գործում ամենամեծ տեղը Աղբյուրների ուսուցչության վերա յե ընկնելու:

Աղբյուրներից հետո անցնելու յեն Անդրկովկասյան մյուս հանրապետությունների և ապա Խ. Միությանը և նրա բաղկացուցիչ մասերին, ի հարկե վոչ այն մանրամասնությամբ, ինչ վոր մեր յերկրի համար է արված: Դա լինելու յե մի համառոտ տեսություն Խորհրդային յերկրների բնակիչների և նրանց կուլտուրական տրնտեսական կյանքի հետ ծանոթանալու համար:

# Ա Ղ Բ Յ Ո Ւ Ր Ն Ե Ր Ը.

Վորպես աղբյուրներ բնագիտության և աշխարհագրության համար կարող են ծառայել հետևյալ գրվածքները:

1. *Семашко*.—Наука о здоровье (краткий очерк).
2. *Яудовский*.—Уроки по естествознанию.
3. *Методика Начальн курса естествознания*.
4. *Райков*.—Человек и животное.
5. *Кашин*.—Физика часть I и II.
6. *Проф. А. В. Цинер*.—Начальная физика, первая ступен.
7. *Иванов*.—Краткая география С. С. С. Р.
8. *М. М. Дубенский*.—Очерки по экономич. географии

Закавказья.

9. *Проф Г. Н. Гехтман*.—Экономическая география Грузии.
10. *А. Ф. Лястер и Г. Ф. Чурсин*.—География Кавказа.
11. *Г. А. Кочарян*.—Нагорный Карабах.



# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

|                                                                                         |        |
|-----------------------------------------------------------------------------------------|--------|
| 1. Ա.Ս.Խ.Հ. Լուսժողովուրդի Ազգային Փոքրամասնություն                                     |        |
| Խորհրդի կողմից . . . . .                                                                | 3 յեր. |
| 2. Ծրագիրը մշակող հանձնաժողովի կողմից . . . . .                                         | 9 »    |
| 3. Կոմպլեքսային սխեման «ԴԿ»-ի ծրագրում . . . . .                                        | 13 »   |
| 4. Առաջին աստիճանի դպրոցի զբաղվելիք <b>էջանի</b>                                        |        |
| խնդիրները . . . . .                                                                     | 17 »   |
| 5. Առաջին աստիճանի դպրոցի ծրագիրը . . . . .                                             | 23 »   |
| 6. Առաջին խմբակի կոմպլեքսային ծրագիրը . . . . .                                         | 25 »   |
| 7. Յերկրորդ » » » . . . . .                                                             | 31 »   |
| 8. Յերրորդ » » » . . . . .                                                              | 40 »   |
| 9. Չորրորդ » » » . . . . .                                                              | 46 »   |
| 10. Հինգերորդ խմբակի առարկայական ծրագրերը . . . . .                                     | 50 »   |
| 11. Մայրենի լեզվի գիտելիքների ծավալը I—IV խմբ. . . . .                                  | 67 »   |
| 12. Մատենատիրական գիտելիքների ծավալը I—IV խմբ. . . . .                                  | 71 »   |
| 13. Հասարակագիտություն IV խմբ. . . . .                                                  | 75 »   |
| 14. Բնագիտություն IV խմբ. . . . .                                                       | 78 »   |
| 15. Կոմպլեքսային ուսուցումը և մայրենի լեզուն . . . . .                                  | 81 »   |
| 16. Հասարակագիտության ծրագրի վերաբերյալ մեթո-<br>դական ցուցմունքներ . . . . .           | 87 »   |
| 17. Բացատրական ցուցմունքներ մատենատիրակալի ծրա-<br>գրի մասին . . . . .                  | 89 »   |
| 18. Մեթոդական բացատրություններ բնագիտության և<br>աշխարհագրության ծրագրի մասին . . . . . | 95 »   |
| 19. Բովանդակություն . . . . .                                                           | 104 »  |

## ԿԱՐԵՎՈՐ ՎԵՐՊԱԿՆԵՐ

|                                                                                                  |  |
|--------------------------------------------------------------------------------------------------|--|
| 8 յերեսի 2-րդ տողում տպված և «բրոշուրներով» պիտի լինի «բյուլլետեններով»                          |  |
| » » 11-րդ » » » » «դեթ» » » «դեթ»                                                                |  |
| 21 » ներքևից 10-րդ տող. տպված և «ձվեր» » » «ձևեր»                                                |  |
| 29 » 6-րդ կոմպլեքսում » «ցուցադրել» » » «ցուցադրել»                                              |  |
| 32 » 5-րդ » » «Անանյան» » » «Անանյան»                                                            |  |
| 41 » 1 սյունյակի վերևից 3-րդ տող. «ընթերցանություն» — «ընթերցում»                                |  |
| » » 3 » ներքևից 4-րդ տող «մեջակ» պիտի լինի «միջակ»                                               |  |
| 51 յերես ներքևից 8-րդ տող «անտակները» պիտի լինի «տեսակները»                                      |  |
| 53 » վերջին տողում «ուժեքանալ» » » «ուժեղանալ»                                                   |  |
| 57 » 1 սյունյակում 4-րդ տող «արաքին» » » «արտաքին»                                               |  |
| 60 » 1 » 10-րդ » «մարդակազմություն» — «մարդակազմություն»                                         |  |
| 61 » 2 » 5-րդ » «անդամահատություն» — «անդամահատություն»                                          |  |
| 66 » ներքևից 13-րդ տողում «ովաստանում» պիտի լինի «ովադանում»                                     |  |
| 67 » վերևից 12-րդ » » «հայտարարություններ դատարանի», պիտի<br>լինի «հայտարարություններ, դատարանի» |  |
| 69 » վերևից 9-րդ տող «Խառնաշաղկապ» պիտի լինի «Խառնաշաղկապ»                                       |  |
| 70 » » 3-րդ » » «բացասական անտեմ» — «բացասական, անտեմ»                                           |  |
| 72 » ներքևից 7-րդ » » «վատթեղներ» պիտի լինի «վարժեցներ»                                          |  |
| 74 » » 3-րդ » » «ավյալներ» » » «ավյալներ»                                                        |  |
| 78 » 1 սյուն. 6-րդ » » «ծանրություն» » » «ծանրություն»                                           |  |
| 79 » » » 5-րդ » » «լեղրամ» » » «լեղրամ»                                                          |  |
| 85 » ներքևից 10-րդ » » «չունի» » » «չունի»                                                       |  |
| 88 » վերևից 10-րդ » » «կիրառվում» » » «կիրառվում»                                                |  |
| » » ներքևից 9-րդ » » «հիշել» » » «հիշել»                                                         |  |
| 92 » » վերջին տող » » «այդ» » » «այդ»                                                            |  |







53. 706

ԳԻՆՆ Ե ՄԵԿ ՌՈՒՐԼԻ

ՈՒՍՈՒՑԻԶՆԵՐԻ ՀԱՄԱՐ 50 ԿՈՊԵԿ

370  
2725-ՏՐ

Դիմել՝—Բազու, «Азгосиздат»-ի բոլոր գրավաճառանոցներին: